

Գիտություն



ԴԵԿՏԵՄԲԵՐ
№ 5
(205)
2008 թ.

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի թերթ



ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտը 50 տարեկան է

Արվեստի ինստիտուտի 50-ամյա հոբելյանին նվիրված հանդիսությունը բացեց ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանը:

Չերմորեն շնորհավորելով ինստիտուտի կոլեկտիվին, Ռ. Մարտիրոսյանը նշեց, որ ինստիտուտը այսօր բեղմնավոր և օգտակար հետազոտություններ է իրականացնում արվեստի բոլոր ոլորտներում: ԳԱԱ նախագահը կոլեկտիվի հաջողությունը օրգանապես կապեց ինստիտուտի հիմնադիր և երկարամյա տնօրեն, ակադեմիկոս Ռուբեն Չարյանի վառ անհատականության հետ, որը առաջին իսկ օրից ինստիտուտի կոլեկտիվի ջանքերը նպատակամղեց այն կարևորագույն խնդիրների կատարմանը, որոնք մինչև օրս հաջողությամբ իրականացնում են ինստիտուտի հայ արվեստի նվիրյալ երախտավորները և երիտասարդները:

Ռադիկ Մարտիրոսյանը նշեց նաև, որ, ի բարեբախտություն ինստիտուտի կոլեկտիվի, ակադեմիկոս Ռուբեն Չարյանին փոխարինեց փայլուն մտավորական, լեզվաբան և արվեստաբան, ակադեմիկոս Լևոն Հախվերդյանը, որը ոչ միայն հաջողությամբ շարունակեց Ռ. Չարյանի սկզբնավորած նախաձեռնությունները, այլև կոլեկտիվի գործունեությունը հարստացրեց նոր գաղափարներով:

Մենք այսօր շնորհավորելով Արվեստի ինստիտուտի 50-ամյակը, - ասաց ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանը, - պետք է արձանագրենք, որ այստեղ հաջողությամբ շարունակվում են բարի ավանդույթները, և նրա կոլեկտիվը կարևոր գործ է կատարում հայ արվեստի բոլոր բնագավառների ուսումնասիրման և արդյունքները հասարակության սեփականությանը դարձնելու ուղղությամբ:

Այնուհետև գեկուցման համար ձայնը տրվում է ինստիտուտի տնօրեն, Հայաստանի արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր Արարատ Աղասյանին, որը ներկայացրեց ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի կենսոլորտը ուղին:

Արվեստի ինստիտուտի 50-ամյա հոբելյանը ողջունեցին ՀՀ Կրթության և գիտության նախարար Սպարտակ Մեյրանյանը, Մշակույթի փոխնախարար Գավիթ Մուրադյանը, ակադեմիկոս Սեն Արևշատյանը, Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի բատրոնի փոխտնօրեն Վրեժ Հակոբյանը, Հայաստանի ազգային պատկերասրահի տնօրեն Փարավոն Միրզոյանը, Հայաստանի ճարտարապետների միության նախագահ Սյրտիչ Մինասյանը, Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի ռեկտոր Արամ Իսաբեկյանը, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի գիտական գծով պրոռեկտոր Հենրիկ Սմբատյանը, Երևանի բատրոնի և կինոյի պետական ինստիտուտի պրոռեկտոր Անետա Երզնյանը, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, ԳԱԱ թղթակից անդամ Աշոտ Մելքոնյանը, ՀՀ ԳԱԱ գրականության ինստիտուտի տնօրեն Ավիկ Իսահակյանը: Հայաստանի նկարիչների միության ուղերձը հրատարակեց Տարիել Հակոբյանը:

Արվեստի ինստիտուտի մի մեծ խումբ աշխատողներ պարգևատրվեցին ՀՀ ԿԳՆ հուշամեդալներով, պատվոգրերով ու շնորհակալագրերով, ՀՀ Մշակույթի նախարարության ոսկե մեդալով ու պատվոգրերով և ՀՀ ԳԱԱ վաստակագրերով ու պատվոգրերով:

Տոնական հանդիսությունը իր փայլուն կատարումներով եզրափակեց Հայաստանի պետական ակադեմիական երգչախմբի ելույթը՝ Խորհրդային Միության և Հայաստանի ժողովրդական արտիստ, Խորհրդային Միության և Հայաստանի պետական մրցանակների դափնեկիր Հովհաննես Չեքիջյանի անգուգական ղեկավարությամբ:



ՀՀ ԳԱԱ նորաստեղծ Սփյուռքի բաժնում ընդգրկվեցին 78 արտասահմանյան անդամներ

Գիտության մեջ ունեցած ներդրման և Հայաստանի գիտության զարգացմանը իրենց նպաստը բերելու նպատակով սփյուռքահայ ճանաչված գիտնականներից 78-ը ընդգրկվեցին ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամներ: Ընտրությունը տեղի ունեցավ սույն փուլի անդամների 28-ին ՀՀ ԳԱԱ ընդհանուր ժողովում:

Նորընտիր արտասահմանյան անդամների հետ տարվող աշխատանքը կհամակարգի ՀՀ ԳԱԱ նորաստեղծ Սփյուռքահայ գիտնականների բաժինը, որի նպատակն է աշխուժացնել Հայաստան-Սփյուռք կապերը, համախմբել իրականացվող գիտական ներուժը և նպաստել Հայաստանի Հանրապետության գիտական առաջընթացին:

Սփյուռքահայ գիտնականները կարող են հանդես գալ որպես փորձագետներ, հնարավորություն ընձեռել երիտասարդ մասնագետներին արտերկրում ծանոթանալու գիտական ժամանակակից ուղղություններին, մասնակցել ՀՀ ԳԱԱ ինստիտուտների աշխատանքներին, ՀՀ ԳԱԱ տարեկան ընդհանուր ժողովներին ներկայացնել իրենց գիտական գործունեության արդյունքները:

Հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունք

Ե. Ազատյան (ԱՄՆ, գրականություն), Յու. Ապրեսյան (ՌԳ, լեզվաբանություն), Վ. Գրիգորյան (ԱՄՆ, պատմություն), Ռ. Գևորգյան (Ֆրանսիա, պատմություն), Գ. Թոսունյան (ՌԳ, իրավագիտություն), Տ. Կոյունջյան (ԱՄՆ, հայագիտություն), Ս. Հարությունով (ՌԳ, ազգագրություն), Ն. Հարությունով (ՌԳ, լեզվաբանություն), Յու. Հարությունյան (ՌԳ, սոցիոլոգիա), Վ. Մյասնիկով (ՌԳ, շինագիտություն), Մ. Պիտոբովսկի (ՌԳ, պատմություն), Ս. Միսրայան (ՌԳ, տնտեսագիտություն), Ա. Տերյան (ԱՄՆ, բանասիրություն), Գ. Ուլուխովյան (Բուլղարիա, պատմություն և բանասիրություն):

Քիմիական և Երկրի մասին գիտությունների բաժանմունք

Վ. Ազատյան (ՌԳ, քիմիկոս), Վ. Ավարյան (ԱՄՆ, ֆիզքիմիա), Վ. Աղաբեկով (Քուվեյտ, ֆիզքիմիա), Գ. Ալեքսանյան (ՌԳ, քիմիկոս), Գ. Գաբրիելյան (ՌԳ, երկրաբանություն), Ա. Խրիմյան (ԱՄՆ, օրգանական քիմիա), Է. Կարախանով (ՌԳ, նավթաքիմիա), Ա. Կոստանյան (ՌԳ, անօրգանական քիմիա), Ս. Հանեսյան (ԱՄՆ, քիմիա), Ռ. Մերսոյան (ՌԳ, անօրգանական քիմիա), Գ. Մելիքյան (ԱՄՆ, օրգանական քիմիա), Ի. Պապիսով (ՌԳ, պոլիմերային քիմիա), Վ. Պետրոսյան (ՌԳ, օրգանական քիմիա), Պ. Սարգիսով (ՌԳ, սիլիկատների քիմիա), Օ. Սարգիսով (ՌԳ, քիմիկոս), Ս. Օրդանյան (ՌԳ, անօրգանական քիմիա):

Կենսաբանական գիտությունների բաժանմունք

Ռ. Ազիզյան (ՌԳ, ուռուցքաբանություն, պլաստիկ վիրաբուժություն), Գ. Անդրանիկյան (Գերմանիա, կենսատեխնոլոգիա), Ա. Գարգի (Մեծ Բրիտանիա, վիրաբուժություն, ուռուցքաբանություն), Վ. Թուրքյան (ՌԳ, կենսաքիմիա, բուսաբանություն), Լ. Խաչիկյան (Ավստրալիա, մոլեկուլային կենսաբանություն, գենետիկա), Ռ. Միրզոյան (ՌԳ, դեղաբանություն), Ա. Մուրադյան (ԱՄՆ, բժշկագիտություն, էնդոկրինոլոգիա), Օ. Ներսեսյան (ԱՄՆ, վիրաբուժություն), Ռ. Չալախյան (ՌԳ, բջջային բժշկագիտություն), Գ. Պապիկ (Ֆրանսիա, մոլեկուլային և բջջային կենսաբանություն), Ա. Պարսեղյան (ԱՄՆ, կենսաֆիզիկա), Հ. Սարգսյանյան (ՌԳ, մանկական վիրաբուժություն), Լ. Սարյան (ԱՄՆ, կենսաքիմիա, էնդոկրինոլոգիա), Վ. Սարգսյան (Ֆրանսիա, մանրէաբանություն), Ս. Սերեդինին (ՌԳ, նյարդաբանական դեղաբանություն):

Ֆիզիկայի և աստղաֆիզիկայի բաժանմունք

Ա. Ապրեսյան (ԱՄՆ, փորձարարական միջուկային ֆիզիկա), Յ. Անարոնյան (Գերմանիա, բարձր էներգիաների աստղաֆիզիկա), Ս. Ավագյան (ՌԳ, իոնոսֆերայի ֆիզիկա), Ա. Բաղդասարյան (ՌԳ, ակուստաէլեկտրոնիկա), Խ. Բաղդասարով (ՌԳ, ծանր մետալուրգիա, ֆիզիկական քիմիա), Լ. Բուզան (ՌԳ, կոնդենսացված վիճակի ֆիզիկա), Ս. Գևորգյան (Շվեդիա, միկրոսպիկային էլեկտրոնիկա), Մ. Եսայան (ԱՄՆ, կիսահաղորդչային ֆիզիկա և օպտոէլեկտրոնիկա), Ռ. Համբարձումյան (ՌԳ, լազերային ֆիզիկա), Մ. Ղազարյան (ՌԳ, լազերային միկրոսկոպիա), Չ. Մուրադյան (Ֆրանսիա, արևային մասնիկների համակարգի ֆիզիկա), Վ. Պետրոսյան (ԱՄՆ, տեսական աստղաֆիզիկա), Ռ. Սեյան (ՌԳ, միկրո(նանո)էլեկտրոնիկա), Պ. Սուքիասյան (Ֆրանսիա, նանոտեխնոլոգիա, սինթետիկ ռադիոազդեցիկ փորձաքննություն), Ս. Ֆոլ (Ֆրանսիա, էլեկտրոնային անկայունություն, ակուստիկա):

Մաթեմատիկական և տեխնիկական գիտությունների բաժանմունք

Ս. Աղյան (ՌԳ, մաթեմատիկա), Ս. Այվազյան (ՌԳ, մաթեմատիկա), Գ. Ապելյան (ԱՄՆ, տեխնիկական գիտություններ), Բ. Բոգոսյան (ԱՄՆ, մաթեմատիկա), Ի. Գյուլերյան (Ֆրանսիա, կոմպյուտերային գիտություն), Է. Չորյան (ԱՄՆ, կոմպյուտերային ինժեներիա), Մ. Թումանյան (Իրան, մաթեմատիկա), Վ. Կուկուշանով (ՌԳ, մեխանիկա), Ա. Մելիքյան (ՌԳ, մեխանիկա), Է. Մինետյան (ԱՄՆ, մեխանիկա), Հ. Շահգոյյան (Շվեդիա, մաթեմատիկա), Լ. Պետրոսյան (ՌԳ, կիրառական մաթեմատիկա), Ա. Սեյրանյան (ՌԳ, մեխանիկա), Մ. Սուվբաթյան (ՌԳ, մեխանիկա), Չ. Տիմոզյան (Կանադա, մաթեմատիկա), Հ. Փանոսյան (ԱՄՆ, մեխանիկա), Ս. Աղայան (ԱՄՆ, ինժեներմատիկա), Ս. Գրիգորյան (ՌԳ, մաթեմատիկա):

ԳՐԱԿԱՆ ՏԵՂԱՇԱՐՄԵՐ ԱԿԱԴԵՍԻԱԿԱՆ ԳՐԱՔՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆՈՒՄ


«Երկար տարիներ ԳԱԱ հրատարակչական գործունեությունը եղել է սարքեր աստիճանի բնակարանների առարկա: Այստեղ սրամաքանակ կուռ համակարգը, որը գոյություն է ունեցել նախկինում, վեր էր անվել մասնավորապես սարքեր միավորների, որոնք իրար հետ համարյա չէին համագործակցում... Ստեղծված իրավիճակը դաժանում էր համալիր գործունեություն և որոշումներ գործընթացը կարգավորելու համար» - այս մասին նշել է ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռ.Ս. Մարտիրոսյանը 2008թ. ապրիլին ՀՀ ԳԱԱ սարեկան ընդհանուր ժողովում և մանրամասն անդադարձել այս բնագավառում կատարվելի աշխատանքներին: Ի՞նչ է փոխվել այս ընթացքում, ի՞նչ վիճակում է գիտական աշխատությունների և հանդեսների հրատարակության գործընթացը ակադեմիկական այս կարևոր ոլակումը իրականացրած բարեփոխումներից հետո: Այս հարցերը լուսաբանելու նպատակով խմբագրությունը դիմեց ԳԱԱ «Գիտություն» հրատարակչական-արտատրական ՊՓԲԸ գլխավոր սնորհն Վ.Նովակիմյանին, որը և մեզ սրամաքեց usnrև հրատարակվող նյութը:

ԳԱԱ գրահրատարակչական ոլորտում 2008 թվականը նշանավորվեց լուրջ փոփոխություններով և դրական տեղաշարժերով: Այս կարևոր օղակը ևս ներառելով ակադեմիական համակարգի ընդհանուր բարեփոխումների շրջանում ԳԱԱ ղեկավարության գործուն և նպատակամետ ձեռնարկումների արդյունքում կատարվեցին կառուցվածքային փոփոխություններ: ԳԱԱ գրահրատարակչական գործընթացը բարելավելու, նրանում առկա ապակենտրոնացումը վերացնելու, հրատարակչական-տպագրական աշխատանքները կանոնակարգելու, ակադեմիական մակնիշով լույս ընծայվող հրատարակությունների հանդեպ անհրաժեշտ պատասխանատվությունը բարձրացնելու նպատակով ԳԱԱ նախագահության որոշմամբ այս ոլորտում գործող տարանջատ երեք օղակները՝ հրատարակչությունը, տպարանը և ակադեմիական հանդեսները, միավորվեցին մեկ ընդհանուր կառույցում: ԳՅ ԳԱԱ նախագահության մեկ այլ որոշմամբ ԳԱԱ գիտահրատարակչական խորհրդի աշխատանքները առավել արդյունավետ դարձնելու նպատակով ստեղծվեց նոր խորհուրդ, որը գլխավորում է ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռ.Մարտիրոսյանը: Աշխատանքները կազմակերպում և համակարգում է խորհրդի փոխնախագահ, ԳԱԱ թղթակից անդամ Ա. Քալանթարյանը, որը ԳԱԱ բաժանմունքների հետ մշակել է միջոցառումներ՝ նպատակաուղղված ակադեմիական գրքերի և հանդեսների կանոնակարգված հրատարակությանը: Կառուցվածքային նման բարեփոխումների արդյունքում հրատարակչական գործառույթները դարձել են առավել կազմակերպված և արդյունավետ, զգալի առաջընթաց է արձանագրվել ակադեմիական գրահրատարակչական գործունեության մեջ: Նախորդ տարվա համեմատ շուրջ եռակի ավելացել են «Գիտություն» հրատարակչության հրատարակած գրքերի քանակը և տպագրական մամուլների ծավալները, ԳԱԱ հանդեսները տպագրվել են նախատեսվածից ավել 120 տպագրական մամուլ ծավալով: Բնականոն հունի մեջ են դրվել «Գիտություն» թերթի հրատարակության հարցերը: ԳՅԽ-ի հետ համատեղ կարգավորվել է ԳԱԱ հանդեսների ներակայնեմիական բաժանորդագրության հարցը: «Գիտություն» հրատարակչությունը 2008թ. հրատարակել է 40 գիտական աշխատություն՝ շուրջ 900 տպագրական մամուլ ծավալով և 14 անուն ակադեմիական հանդես՝ (54 համար) 430 տպագրական մամուլ ծավալով: Գրատարակչության կողմից իրականացված ընդհանուր գրահրատարակչական ծավալները անհամեմատ աճել են. նախորդ տարվա 400 տպագրական մամուլի փոխարեն լույս են տեսել 1300 տպագրական մամուլ ծավալով, 26100 օրինակ տպաքանակով գրքեր և հանդեսներ: Ակադեմիական գրքերից զատ պատվերային կարգով իրականացվել են նաև այլ հրատարակություններ: Ընթացիկ տարում պետական հովա-

նավորությամբ լույս տեսած գրքերից արժանահիշատակ են Վ.Յամբարձումյանի 100-ամյակին նվիրված հոբելյանական եռալեզու ժողովածուն, Ի.Դրամբյանի «Հակոբ Տուրաբեցի», Պ.Մուրադյանի «Կովկասեան մշակութային աշխարհը եւ Հայաստանը», Վ.Բարխուդարյանի «Պատմագիտության հարցեր» աշխատությունները, հեղինակային կոլեկտիվի «Շուշին հայոց քաղաքակրթության օրրան» ժողովածուն և այլն: Բացի պետական ֆինանսավորումից (որը հիմնականում հատկացվում է հանդեսներին), գրահրատարակչական գործունեության ծավալմանն աջակցում են նաև հովանավորները: Այս շարքում արժանահիշատակ է «Գալուստ Գյուլբենկյան» հիմնադրամը, որի հովանավորությամբ շարունակվել է «Պատմաբանասիրական հանդեսի» հրատարակությունը, լույս են տեսել Ավ. Իսահակյանի ԵԼԺ-ի ակադեմիական հրատարակության 4-րդ հատորը և պ.գ.դ. Գ. Հարությունյանի «Նոր Բայազետի գավառը 1828-1913թթ.» աշխատությունը: ԳՅ Ազգային ժողովի նախկին նախագահ Ս. Թորոսյանի հովանավորությամբ լույս են տեսել Լ. Շանթի ԵԺ-ի 2-րդ և 3-րդ հատորները: ԳՅ Կենտրոնական բանկի աջակցությամբ լույս տեսած հեղինակային կոլեկտիվի «Հին Հայաստանի ոսկին» աշխատությունը ԳՅ մշակույթի նախարարության սահմանած՝ «Տպագրված է Հայաստանում» անվանակարգում 2008թ. արժանացել է առաջին կարգի մրցանակի: Հայ բարեգործական ընդհանուր միության հովանավորությամբ լույս է տեսել Լ.Ս.Սյուրմեյանի «Արձակի տեսիլներ. չափ և խենթություն» աշխատությունը: Կառուցվածքային բարեփոխումներից հետո հրատարակչության աշխատանքներում դեռևս կան անցումային շրջանին հատուկ գործառնական բնույթի որոշակի դժվարություններ և չլուծված խնդիրներ, որոնց կարգավորումը ժամանակի հարց է: Տակավին բացակայում է փոխհամագործակցությունը ԳԱԱ որոշ ինստիտուտների հետ, որոնք անտեսելով ԳԱԱ նախագահության համապատասխան որոշումները, շրջանցելով ԳԱԱ գիտահրատարակչական խորհուրդը և հրատարակչական աշխատանքների փուլը, շարունակում են իրենց աշխատությունները ակադեմիական մակնիշով տպագրել այլ հրատարակչությունների միջոցով: Գրահրատարակչական ոլորտում իրականացված բարեփոխումների արդյունքներն առավել զգալի կլինեն 2009թ., երբ նոր կառուցված մասնաշենքում իր աշխատանքները կվերսկսի տպարանը, որը հնարավորություն կընձեռնի կենտրոնացված կազմակերպելու ԳԱԱ հանդեսների և գիտական աշխատությունների տպագրության գործընթացը: Դրան կնպաստի նաև ԳԱԱ նախագահ Ռ.Մարտիրոսյանի անմիջական ջանքերի շնորհիվ 2009թ. ակադեմիական գրահրատարակչությանը պետությունից հատկացվելիք ֆինանսական միջոցների զգալի ավելացումը:

Վիկտոր ՀԱՄԲԱՐՉՈՒՄՅԱՆ-100

Հանձարեղ գիտնական և աստղաֆիզիկոս, ականավոր հասարակական-հաղափական գործիչ, ճանաչված հայրենասեր Վիկտոր Համբարձումյանի 100-ամյակի օրերին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան և նրա «Գիտություն» հրատարակչությունը ընթերցողի սեղանին դրեցին «Վիկտոր Համբարձումյան» սովոր և դերձ ժողովածուն՝ նվիրված ազգային դարձանի Վիկտոր Համբարձումյանի կյանքին և գործունեությանը:




ԵՐԱՆՏԻՔԻ ՏՈՒՐՔ

Գրքում գետնելված են համաշխարհային ճանաչում ունեցող գիտնականների, մեծանուն գիտնականի աշակերտների, գործընկերների և ժամանակակիցների հուշերը մի բացառիկ անձնավորության մասին, որն անջնջելի հետք թողեց 20-րդ դարի աստղաֆիզիկայի, տեսական ֆիզիկայի և մաթեմատիկայի բնագավառներում: Գիրքը կազմել և հրատարակության է պատրաստել ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Էլմա Պարսամյանը: Կարևորելով Էլմա Պարսամյանի վիթխարի աշխատանքը, այն մեծ սերը, հիացումը և ակնածանքը, որը նա տածել է մեծահռչակ Համբարձումյանի նկատմամբ և որով աղեցուն է ամբողջ գիրքը, մենք հարկ համարեցինք մի քանի հարց ուղղել Էլմա Պարսամյանին: - Տիկին Պարսամյան, Ձեր կատարած հսկայական աշխատանքը անպայման արժանի է ամենաբարձր գովասանքի, հարգանքի և շնորհակալության: Դուք գրքի «Կազմողի կողմից» խոսքում ունեք այսպիսի բնաբան «Այս գիրքը երախտագիտության տուրք է մեր Ուսուցչին...»: Կարծես ամեն ինչ ասված է, սակայն, այնուամենայնիվ, ի՞նչը Ձեզ նպատակադրեց կազմելու այս ծանրակշիռ և հիանալի հատորը: - Անկեղծ ասած իմ բնաբանը թերևս պատասխանում է ձեր հարցին, իսկ նախապատմությունը այսպիսին է: Ուղիղ քսան տարի առաջ Վիկտոր Համբարձումյանն ինձ առաջարկեց գիրք գրել Բյուրականի աստղադիտարանի մասին: Բյուրականի մասին գրել նշանակում էր ամենից առաջ գրել աստղադիտարանի հիմնադրի, նրա գիտական նվաճումների մասին, նվաճումներ, որոնք Բյուրականի աստղադիտարանին բերել էին միջազգային համբավ և ճանաչում: Ի դեպ, Վիկտոր Համբարձումյանը հատուկ ընդգծեց, որ այդ գիրքը պետք է լինի հայերեն: ...Ցավոք, այդ գրքի առնչությամբ մենք ընդամենը երեք անգամ հանդիպեցինք, և ես գրի առա նրա պատմածները: Սկսվեց արցախյան շարժումը, չարաբաստիկ «վերակառուցումը»: Վիկտոր Համբարձումյանը ժամանակ չէր գտնում գրքի համար: Դրանից հետո էլի եղան պատճառներ, և գրքի համար մեր հանդիպումները ընդհատվեցին: Ես դեռ հույսով էի, երբ 1996-ին Մեծ

Համբարձումյանը վախճանվեց: ...1998 թվականից ես որոշեցի հավաքել նրա մասին եղած հիշողությունները, կարծիքները, մտքերը, հրապարակումները: Գրքի ստեղծման գաղափարը ինձ հանգիստ չէր տալիս, որովհետև ես այնպես էի կարծում, որ պարտք եմ մնացել մեր մեծ ուսուցչին, Վերածնունդի դարաշրջանի հսկաներին հավասար մարդուն: Եվ պատրաստ այս հատորը վկայություն է, որ ես որոշ չափով կատարեցի իմ պարտքը մեծ ուսուցչի հանդեպ: - Տիկին Էլմա, հիմա, երբ այս սքանչելի գիրքը իրողություն է, ի՞նչ զգացումներ են համակում Ձեզ: - Մեծ, շատ մեծ բավարարվածություն: Կարծում եմ, որ չմարած պարտքը շատ տհաճ բան է: Հիմա ես ազատ շունչ եմ քաշում և, կրկնում եմ, անչափ բավարարված եմ: Ի դեպ, ասեմ նաև մի բան: Այս գիրքը ավելի շատ հասցեագրված է ապագա սերունդներին, նրանց, որ ապրելու են 100 տարի հետո: Որովհետև մեր ժամանակների մարդկանց մեջ հազիվ թե գտնվի մեկը, որ չիմանա և չիիմանա աշխարհառաջիկ իր հայրենակցով, որը, անգլիական բնութագրմամբ «Մարդ էր իր ամեն բանով»: Թող մեր հետնորդները իմանան իրենց հանձարեղ նախնու մասին: - Տիկին Պարսամյան, Դուք Ձեր խոսքում օգտագործեցիք այսպիսի արտասույտություն «պարտքս որոշ չափով կատարեցի»: Ինչո՞ւ որոշ չափով: - Հասկանում եք, ես ուզում եմ, որ հիմնավորապես գրվի և բացատրվի, թե ինչու էին Համբարձումյանի տարիներ առաջ արտասույտ գաղափարները, նրա արարումները այդքան հեղափոխական, գրվի նրա ստեղծած նոր ուղղությունների և դրանց հետևողների մասին և այն հայտնագործությունների մասին, որոնք կատարել է Համբարձումյանը և որոնք դեռևս սպասում են իրենց հետազոտողին և շարունակողին: Ես ոչ միայն հույս ունեմ, այլև համոզված եմ, որ այդ գործը կկարողանա և սիրով կկատարի նրա նվիրված աշակերտներից մեկը՝ Բյուրականի աստղադիտարանի տնօրեն Հայկ Հարությունյանը: Եվ նորից կրկնելով ինձ, ընդգծեմ, որ նրա ուսումնասիրությունը ավելի շատ պետք է ոչ թե մեզ՝ ժամանակակիցներին, այլ ապագա սերունդներին, որ իմանան և ճանաչեն աշխարհառաջիկ հայ հանձարին:



1988 թ. դեկտեմբերի 7-ի Մեծ երկրաշարժի 20-ամյա տարելիցի կապակցությամբ ոգեկոչման արարողություններ տեղի ունեցան Գյումրիում, Վանաձորում, Սպիտակում, Երկրի և արտերկրի բազմաթիվ այլ քաղաքներում ու բնակավայրերում: Հազարավոր անմեղ զոհերի հիշատակը խնկարկեցին ՀՀ նախագահ Մերժ Սարգսյանը, ՀՀ ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանը, ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը, Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդը, պաշտոնական ավագանին, հոգևոր, զինվորական, դիվանագիտական բարձրաստիճան դասերը, Հայաստանի, Արցախի և Սփյուռքի ողջ հայությունը: 20 տարի անց հայ ժողովրդին կրկին ցավակցական հեռագրեր և ուղերձներ ուղղեցին աշխարհի մի շարք երկրների առաջնորդներ, նշանավոր գործիչներ:



ԳԻՏԱԿԱՆՆԵՐԸ ԴԱՍԵՐ ԵՆ ԲԱՂՈՒՄ ՍԴԻՏԱԿԻ ԵՐԿՐԱՇԱՐՄԻՉ

Կազմվել է Հայաստանի սեյսմիկ վրանգի քարտեզի երկրաֆիզիկական տարբերակը

ՀՀ ԳԱԱ նախագահության ընդլայնված նիստը օրերս քննարկեց «Սպիտակի երկրաշարժի դասերը» և «Հայաստանի Հանրապետության սեյսմիկ վտանգի քարտեզի երկրաֆիզիկական տարբերակը» գիտական հետազոտություններն ամփոփող զեկուցումները: Ձեկուցումներով հանդես եկան ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Էդվարդ Խաչիյանը և ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Սևադա Հովհաննիսյանը:

Նիստը, որ նվիրված էր Սպիտակի երկրաշարժի 20-ամյակին, բացեց ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանը: Նա նշեց, որ Սպիտակի աղետալի երկրաշարժի տարելիցը նշվում է ոչ միայն Հայաստանում, այլև մեր երկրի սահմաններից դուրս: «Սա այն սարսափելի աղետներից է, որ հայտնի է ողջ աշխարհին: Աղետի պատճառով մենք ունեցանք հսկայական թվով անմեղ զոհեր: Երկրաշարժի ուժգնությունը և նրա պատճառած ահռելի վնասները ստիպեցին, որ այն ենթարկվի հիմնարար ուսումնասիրության: Անցած տարիներին կատարված բազմաթիվ ու բազմապիսի հետազոտությունները կարևոր նշանակություն ունեցան սեյսմակայուն շինարարության նորմերը ճշգրտելու ու կայուն և անվտանգ շինարարություն իրականացնելու գործում:

Ուսումնասիրությունների արդյունքում սեյսմա-

կայուն վիճակի վերաբերյալ նաև նոր քարտեզներ կազմվեցին: «Հայտնի է, որ մենք այդքան կորուստներ չէինք ունենա, եթե շենքերը սեյսմակայուն լինեին: Այն ժամանակ Գիտությունների ակադեմիայում ստեղծված երկրաշարժի արդյունքներն ուսումնասիրող ու մշակումներ կատարող խմբի ուսումնասիրություններն այժմ հրատարակվելու են Ամերիկայում՝ ռուսերենով և անգլերենով ու նպատակ կա նաև թարգմանել հայերեն»,- ասաց ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանը:

- Մինչ Սպիտակի երկրաշարժը, - նշեց ակադեմիկոս Էդ. Խաչիյանը, - Հայաստանն ընդգրկված էր 7 բալանոց սեյսմիկ գոտում: Սպիտակի երկրաշարժից հետո խորհրդային իշխանությունները ամբողջ Հայաստանի տարածքը դարձրեցին 9 բալանոց սեյսմակայունության տարածք: Ակադեմիկոսը վստահեցնում է, որ այժմ Հայաստանում շինարարությունն իրականացվում է 8-10 բալի մակարդակով. «Այս սեյսմիկ գործակիցն ընդունելի է արտասահմանյան շատ սեյսմոլոգների կողմից, նաև համապատասխանում է մեր հարևան երկրներում հաստատված գործակիցին, քանի որ երկրաշարժի առաջացման գոտիները մեկուսացված չեն, այլ ամբողջ տարածքի համար են»:

Կարևոր և հետաքրքիր միջոցառում՝ «Համշեն և համշենահայեր, պատմություն և մշակույթ»

«Կոնգրես» հյուրանոցի մեծ սրահում կայացած միջազգային այս գիտաժողովը «կազմակերպված էր Համշենական շաբաթ» փառատոնի շրջանակներում ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի և «Երկիր» միության կողմից: Այն առանձնակի ուշադրության է արժանի, քանի որ գերազանցեց սովորական գիտաժողովների մասին ընդունված պատկերացումները:

Ներկայացվեց 15 զեկուցում, ինքնատիպ և չկրկնող մեկը մյուսին:

Միջոցառման հաջողությունը ակնհայտ է, քանի որ ներկայացված զեկուցումների հետաքրքրությունների շրջանը շատ դեպքերում թարմ տեղեկություն պարունակեց, նաև նոր մտայնությունների արդի հնարավորությունների արգասիք է: Անհրաժեշտ են համարում նշել նաև զեկուցումների բաժինների գիտակ դասավորությունն ու հերթականությունը, ինչը հնարավորություն տվեց իրոք լայնահուն և սպառիչ պատկերացում կազմել Համշենի և համշենահայերի պատմության և մշակույթի մասին:

Միջոցառման ավարտին դիմեցի ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի տնօրեն Ռուբեն Սաֆրաստյանին՝ ամփոփել իր մտայնությունները սույն տեղեկատվության նպատակով: Նա ասաց, «Վերջին տարիներին հետաքրքրությունը Համշենի և համշենահայերի խնդրի հանդեպ աճել է. ԱՄՆ-ում, Եվրոպայում լույս են տեսնում գրքեր ու հոդվածներ, հրավիրվում են

գիտաժողովներ: Ես հուսով եմ, որ մեր այս միջազգային գիտաժողովը ոչ միայն լուրջ ավանդ կլինի այդ խնդրի ավելի խորը և համակողմանի հետազոտման տեսակետից, այլ նաև կօգնի մեզ ավելի լավ հասկանալ մեր ազգի առանձնահատկությունները, նրա դրսևորումները տարբեր, շատ դեպքերում անբարենպաստ աշխարհագրական և հոգևոր միջավայրերում փաստելով հայկական ինքնության հզորությունը:

Այսօր թուրքիայում նույնպես հետաքրքրվում են Համշենի խնդիրներով: Կատարվում են դաշտային հետազոտություններ, ուսումնասիրվում են պատմության հարցերը, պաշտպանվում են ատենախոսություններ: Անշուշտ, մենք համաձայն չենք թուրք մասնագետների ներկայացրած որոշ տեսակետներին: Մասավորապես, դեռևս 30-ական թվականներից թուրք պատմաբանները «տեսություն» են առաջ քաշել, ըստ որի համշենահայերը դասվում են թյուրքական ցեղերի թվին և շարունակում են հետևել նրան: Այս և նմանօրինակ մտայնությունները, որոնք չեն հենվում վստահելի պատմական աղբյուրների վրա, անընդունելի են ոչ միայն հայ, այլ նաև արտերկրի մասնագետների համար:

Ի դեպ, գիտաժողովի նյութերը կիրատարակվեն գրքով, երեք լեզուներով:

Կարինե ՍԱՍՎԵՆՅԱՆ

ԳՐԵՒ ԵՆՈՐՀԱՆԴԵՍ

«Ճանապարհ դեպի փոռ» մի մարդու կյանքի պատմություն

ՀՀ Գիտությունների ակադեմիայում վերջերս տեղի ունեցավ Կարնեգի կորպորացիայի նախագահ Վարդան Գրեգորյանի հեղինակած և ռուսերենով օրերս հրատարակված «Ճանապարհ դեպի փոռ» ինքնակենսագրական գրքի շնորհանդեսը:

ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը, ով անձնապես ծանոթ է գրքի հեղինակին, նշեց, որ «Յուրաքանչյուր մարդ իրենից ինչ-որ բան է ներկայացնում, ուստի ոչ ոքի ներկայացնելու կարիք չկա»: Վ. Գրեգորյանի այս միտքն արդեն վաղուց դասվում է ժամանակակից աֆորիզմների շարքին: Նրա խոսքով «Ճանապարհ դեպի փոռ» գիրքը մի մարդու կյանքի պատմություն է, որն ինքն է կռել իր ճակատագիրը կրթության, տրեմանքի և մարդկային բարության վալեյի միջոցով: Գիրքը գրված է անձնական օրագրի տեսքով, որն արտացոլում է նրա 60 տարիների կյանքը՝ բացառապես թավրիզում աղքատիկ մանկությունից մինչև Նյու-Յորքի հանրային գրադարանի, իսկ հետագայում՝ Բրաուն համալսարանի նախագահի պաշտոնի իր անցած ճանապարհը»:

Վարդան Գրեգորյանը Անդրյու Կարնեգիի կողմից 1911թ. հիմնադրած Նյու-Յորքի Կարնեգի կորպորացիայի 12-րդ և առաջին ոչ ամերիկացի նախագահն է: Ռադիկ Մարտիրոսյանի խոսքով, Կարնեգի կորպորացիայում որպես նախագահ աշխատանքի անցնելուց հետո է, որ Գրեգորյանը լծվել է իր իսկ խոսքերով ավելի բարդ գիտակրթական բազմաթիվ աշխարհափոշու ծրագրերի ֆինանսավորման գործին:

Ներկայումս Վարդան Գրեգորյանը խորհրդի անդամ է մի շարք հայտնի կառույցների, ներառյալ Պրինստոնի առաջատար ուսումնասիրությունների ինստիտուտը, Առևտրի համաշխարհային կենտրոնի հիշատակի հիմնադրամը, ժամանակակից արվեստի բանգարանը: Վարդան Գրեգորյանի ներդրումը գիտության և արվեստի բնագավառում արժանացել է ամենաբարձր պարգևների:

Հայ գիտնականները անհանգստացած են Հայաստանի Էկոլոգիական վիճակով

ՀՀ ԳԱԱ նախագահության գիտական նստաշրջանը նվիրված էր Հայաստանի էկոլոգիական անվտանգության և բնապահպանական հիմնահարցերին:

Բացելով նիստը ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը կարևորեց հարցի բնանրվումը, քանի որ հատկապես վերջին տարիներին մեր երկրում ավելացել են էկոլոգիական ռիսկերը: ՀՀ ԳԱԱ գիտահետազոտական ինստիտուտների տվյալները փաստում են, որ ինչպես Երևանում, այնպես էլ արդյունաբերական կենտրոններում, հանքավայրերին հարակից տարածքներում առկա է էկոլոգիական և բնապահպանական իրավիճակի զգալի վատթարացում:


- Ներկա բնանրվումը, - նշեց ԳԱԱ բնական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Վիլեն Հակոբյանը, - նպատակ ունի համապատասխան մարմինների և հատկապես իշխանությունների ուշադրությունը բեռել այս կարևոր խնդրի վրա:

Նիստում զեկուցումներով հանդես եկան ԳԱԱ քրդակից անդամ Ռաֆայել Հովհաննիսյանը («Էկոլոգիական և բնապահպանական բաղադրականության և ռազմավարության հարցերը ՀՀ օրինակով»), Էկոլոգոսոսֆերային հետազոտությունների կենտրոնի տնօրեն Արմեն Սաղաթեյանը («Քաղաքակենտրոնացված տարածքների էկոլոգիական ռիսկի հիմնահարցերը»), Կենդանաբանության և էկոլոգիայի կենտրոնի տնօրեն Մարկ Քալաշյանը («Հայաստանի կենդանական աշխարհի կենսաբազմազանության ներկա վիճակը»), Բուսաբանության ինստիտուտի տնօրեն Ժիրայր Վարդանյանը («Հայաստանի բուսական աշխարհի բազմազանության պահպանության խնդիրները»), Հիդրոէկոլոգիայի և ձկնաբանության ինստիտուտի տնօրեն Բարդուղ Գաբրիելյանը («Սևանա լճի կենսապաշարների վիճակի մասին»):

Քննարկումների արդյունքում որոշվեց համապատասխան առաջարկություններ ներկայացնել կառավարությանը՝ միջոցներ ձեռնարկելու ՀՀ էկոլոգիական անվտանգության և բնապահպանական վիճակի բարելավման ուղղությամբ:



ՀՀ ԳԱՍ ԱՐՎԵՍՏԻ



Ծիշտ 50 տարի առաջ, 1958-ին Երևանում, Հայաստանի Գիտությունների ակադեմիայի կազմում ստեղծվեց Արվեստի ինստիտուտը, որն իր գոյության առաջին իսկ տարիներից դարձավ հայ արվեստի ուսումնասիրման հիմնական կենտրոնը:

Արվեստի ինստիտուտի երկու տարի անցումն ու երկարամյա ղեկավարն էր ակադեմիկոս Ռուբեն Չարյանը: 1987-ից մինչև 2003 թվականներն այդ պաշտոնը վարել է ակադեմիկոս Լևոն Հակվերյանը:

Ստեղծման պահին ինստիտուտում գործել են ճարտարապետության (վարիչ՝ Ա.Սահիճյան), կերպարվեստի (վարիչ՝ Ռ.Գրամբյան), քարտեզի (վարիչ՝ Ռ.Չարյան) և երաժշտության (վարիչ՝ Մ.Մուրադյան) բաժինները: 1965-ին երաժշտության բաժինը արձակվեց հռոկոս ու դասական երաժշտության (վարիչ՝ Գ.Գյոյազյան) և ժողովրդական երաժշտության (վարիչ՝ Մ.Մուրադյան) բաժինների: 1969-ին սկսեց գործել կիրառական արվեստի բաժինը (վարիչ՝ Ռ.Գրամբյան), իսկ 1979-ին՝ կինոյի և հեռուստատեսության բաժինը (վարիչ՝ Կ.Քալանթար):

Ինստիտուտի գիտական գործունեության բնույթն ու ուղղվածությունը պայմանավորվեցին առաջին հերթին նրա հիմնադիրների՝ լայն հայացքների և գեղարվեստական նուրբ ճաշակի տեր մարդկանց հեղինակությամբ ու անհատական վառ նկատարարով: Նրանք դժվարությամբ և փորձառիտությամբ միջոցով հայացք հղում էին արվեստի և փորձառիտության համաձայնագրի գիտության ու գեղարվեստական մտքի լավագույն ավանդույթները՝ գուցորդելով բարձր սկզբունքայնությունը և գիտական բարեխղճությունը: Օրինակ ժառանգելով իրենց կրտսեր գործընկերների համար նրանք մեծապես պայմանավորեցին ինստիտուտում տիրող ստեղծագործական առողջ մթնոլորտը:

Անցած հիսուն տարիների ընթացքում ինստիտուտը շոշափելի արդյունքների հասավ ճարտարապետության պատմության ասպարեզում: Դեռևս 1930-ական թվականներից քափ առան ճարտարապետական հուշարձանների պեղումները: Գիտական խոշոր ներդրում էր Գ.առնիի հերանտական տաճարի վերականգնման հիմնավորումը, որը Երևանում կառուցվեց 1968-ին: Նախագծի հեղինակ Ա.Սահիճյանի ղեկավարությամբ իրականացվեցին տաճարի վերաշինման աշխատանքները: Իր կատարած գիտական սխրանքի համար Սահիճյանն արժանացավ Հայաստանի պետական մրցանակի:

Ինստիտուտի ճարտարապետության պատմաբանների կարևոր խնդիրներից էր ճարտարապետության պատմությունն ընդհանրացնող աշխատությունների ստեղծումը: Այս ուղղությամբ առաջին փորձն էր «Արվեստի հայկական ճարտարապետության պատմություն» (1964) կոլեկտիվ աշխատությունը: Հանգրվանային հաջորդ աշխատանքը հայ ճարտարապետական գիտության անցած տասնամյակների ձեռքբերումներն ամբողջացնող «Հայկական ճարտարապետության պատմություն» վեցհատորյակն է, որի 3 հատորներն արդեն դրվել են ընթերցողի սեղանին:

Վաղմիջնադարյան հայկական ճարտարապետության բնագավառում էական նշանակություն ունեցան Ա.Սահիճյանի «Քասաղի բազիլիկայի ճարտարապետությունը» աշխատությունը (1955) և Էջմիածնի տաճարում նույն հեղինակի կատարած պեղումները, որոնց հիման վրա զրված հոդվածները նոր լույս սփռեցին այդ երևույթի կառուցչի շինարարական կյանքի վրա: Զվարթնոցի, Բագարանի, Գոմաշենի, Կարենի, Հայաստանի վաղմիջնադարյան կենտրոնազմբեք փոքր հուշարձանների և մեծորիշ կորոզների ուսումնասիրմանը նվիրվեցին Ստ.Մնացականյանի, Ա.Չարյանի, Մ.Հարսեյանի, Վ.Գրիգորյանի և այլոց մենագրությունները:

Հայկական ճարտարապետության զարգացման հաջորդ շրջանին էին վերաբերում Ստ.Մնացականյանի "Архитектура армянских «притворов»" (1952) և «Հայկական ճարտարապետության Սյունիքի դպրոցը» (1960) արժեքավոր գրքերը: Միջնադարյան ճարտարապետության հետ սերտորեն կապված

հայկական բանդակն է դիտարկվում նույն հեղինակի «Հայկական աշխարհիկ պատկերաբանը IX-XIV դարերում» (1976) և «Արարկեոսի վարպետները» (1982) աշխատություններում, իսկ ճարտարապետության և բանդակագործության համադրման պրոբլեմները հատուկ տեղ գտան նրա «Աղբամար» (1983) մենագրության մեջ:

Մ.Հարսեյանի «Սյունիքի XVII-XVIII դարերի ճարտարապետական համալիրները» (1973) աշխատության մեջ վերականգնված ճարտարապետական հարուստ ժառանգությունը հիմք հանդիսացավ ուշ միջնադարի հայ շինարվեստը որպես անկումնային երևույթ ներկայացնող տեսակետները հերքելու համար:

Ուշ միջնադարյան ճարտարապետության անմիջական շարունակությունն է 19-րդ դարի և 20-րդ դարակցի հայ ճարտարապետական մշակույթը, որը նոր էջ է բացում երկրի ճարտարապետական արվեստում: Գրա ուսումնասիրման են նվիրված Ն.Պապուխյանի աշխատանքները:

Խորհրդային ճարտարապետության ուսումնասիրման բնագավառում զգալի է Լ.Քալանթարի, Կ.Հովհաննիսյանի, Վ.Հարությունյանի, Լ.Չարյանի, Մ.Հարսեյանի, Լ.Գոլոյանյանի, Կ.Քալանթարի և այլոց վաստակը: Հայ ճարտարապետության անկումնային ներկայացուցիչներին, ռեալիստ տարրեր ստեղծողներին, քաղաքաշինությանը, նոր շինանյութերի և շինարարական առաջավոր մեթոդների որոնմանը նվիրված նրանց բազմաթիվ աշխատություններում ընդհանրացվեց խորհրդային ճարտարապետության հարուստ փորձը:

Նշանակալից էին Արվեստի ինստիտուտի և Միլանի հայկական ճարտարապետության ուսումնասիրության հետազոտական կենտրոնի համագործակցության շնորհիվ լույս տեսնող հայկական ճարտարապետության առանձին հուշարձաններին վերաբերող պրակները: 1967-ին սկիզբ առած այդ բեղմնավոր համագործակցության շնորհիվ տարիների ընթացքում Միլանում խոսակերտ, հայերեն և անգլերեն լեզուներով հրատարակվեցին «Վարկերգեր հայ ճարտարապետության» մատենաշարի 23 պրակները, որոնցում ներկայացված են Հայաստանի, Թուրքիայի և Իրանի տարածքներում գտնվող ճարտարապետական համալիրները:





Միլանի կենտրոնի և Արվեստի ինստիտուտի համագործակցության կարևորագույն արդյունքներից էր Հայ արվեստին նվիրված միջազգային սիմպոզիումների կազմակերպումը: 1975-ին Իտալիայում հրավիրված առաջին սիմպոզիումին մասնակցեցին աշխարհի տարբեր երկրների շուրջ 60 ճանաչված գիտնականներ: Չեկուցումները հաջեցան էին փաստական հարուստ նյութով, նոր հարցադրումներով, ունեին գիտական բարձր մակարդակ: Երկրորդ (1978) և չորրորդ (1985) սիմպոզիումները կայացան Երևանում, երրորդը (1981) և հինգերորդը (1988) վերստին Իտալիայում: Սիմպոզիումների զեկուցումները տպագրվեցին առանձին ժողովածուներով:

Այսօր վիթխարի փաստական նյութ է կուտակվել հայկական միջնադարյան հուշարձանների վերաբերյալ: Օրվա հրամայականն է այդ նյութի համակարգումը և հրատարակումը, որը մեծ խթան կդառնա Հայաստանի շինարարական արվեստի հարուստ ժառանգության հետագա առավել խոր գիտական ուսումնասիրության համար: Եթե մինչ օրս նկատելի հաջողություններ են գրանցվել հայ ճարտարապետության պատմության հետազոտության գործում, ապա եզակի են տեսական բնույթի աշխատանքները: Առայժմ սակավաթիվ են հայկական ճարտարապետական առեւտրայիններին նվիրված ուսումնասիրությունները: Անբավարար է ուսումնասիրված արվեստի համադրման սիմբոլիկ խնդիրը, հայկական վաղքրիստոնեական և Հայաստանի նավաբրիստոնեական ճարտարապետության կապի հիմնահարցը: Անբաժնետ է կարգի բարտաբարտել ելլենիստական և ուրարտական շրջանների ճարտարապետության բնագավառում:

Ազգային կերպարվեստը նույնպես գրավել է հայ և օտարագի գիտնականների ուշադրությունը: Հարուստ պատմություն և ժամանակակից նվաճումներ ունեցող մեր մշակույթի այդ բնագավառի կանոնավոր ուսումնասիրությունը ևս լայն ժապավ ստացավ վերջին 50 տարիների ընթացքում:

Հայ ժամանակակից արվեստագիտության սկզբնավորումը սերտորեն կապված է վաստակաշատ արվեստագետներ Ռ.Գրամբյանի և Լ.Գոմեզովի անունների հետ: Խորհրդային կերպարվեստագիտության առաջնահերթ խնդիրներից էր անցյալի հայ կերպարվեստի ուսումնասիրության հարցը: Հենց Գոմեզովն հաստատեց հայկական վաղ միջնադարյան որմնանկարչության գոյությունն ու նշանակությունը վաղքրիստոնեական արվեստում: Ռ.Գրամբյանի հետ մեկտեղ, նա առաջինն էր, որ միջնադարյան ձեռագրերի մանրանկարչական արվեստը դասակարգեց ըստ դպրոցների, բնորոշեց դրանց առանձնահատկությունները, մանրանկարչների ցանկը համայնեց նոր անուններով: Կերպարվեստագիտության մեջ նրա ներմուծած միջնադարյան շարունակելիքն է Ազարյանը, Ա.Ավետիսյանը, Ն.Բոբանյանը, Ի.Գրամբյանը, Վ.Վազարյանը, Լ.Չարյանը, Ս.Մանուկյանը և ուրիշները: Հայկական վաղմիջնադարյան պատկերաբանակալի ուսումնասիրության գործում շոշափելի է Լ.Ազարյանի վաստակը:

Ստեղծվում են մանրանկարչության առանձին դպրոցներին նվիրված մենագրություններ, ընդլայնվում են միջնադարյան հայ արվեստի ուսումնասիրության շրջանակները, լուսաբանվում են նշանավոր մանրանկարիչ-մսկավորների Թորոս Ռոստիկի, Մարգիս Պիծակի, Հակոբ Ջուղայեցու ստեղծագործական ժառանգության յուրահատկությունները, գիտական ուսումնա-



ԻՆՏԵՒՆՏԵ 50 ՏԱՐԻՄ

սիրության նյութ են դասնում հայկական զարգանկարչությունը, որմնակարչությունը, քանդակագործությունը, խաչքարերը, միջնադարյան հայ ճարտարապետության և կերպարվեստի մի շարք ճյուղերի համադրման հարցերը:

Վերջին շրջանում հայ միջնադարյան կերպարվեստի ուսումնասիրողների ուշադրության կենտրոնում են նաև տեսական խնդիրները, որոնք, մասնավորապես, լուսաբանվել են Ն.-Քոբանջյանի և Վ.Վազարյանի աշխատանքներում:

Վ.Վազարյանի գրքերում ու հոդվածներում առաջին անգամ հանգամանորեն լուսաբանվում է 17-18-րդ դարերի հայ կերպարվեստը՝ բնորոշվելով որպես միջնադարը նոր շրջանի հետ կապող անցումային կարևոր օղակ:

Ինստիտուտի մասնագետների ուշադրության ոլորտում են նոր և նորագույն հայ կերպարվեստի առնչություններն այլ ժողովուրդների, հատկապես ռուսական արվեստի հետ, ինչպես և առանձին խոշոր վարպետների ստեղծագործական կյանքի հանգամանքները: Այդ բնագավառում հատկապես մեծ է Ռ.Գրամբյանի, Մ.Սարգսյանի, Մ.Վազարյանի, Մ.Ավլազյանի, Ն.Ստեփանյանի, Վ.Մաքսիմյանի վաստակը: Նրանց գործը հաջողությամբ շարունակում են Ա.Աղասյանը, Մ.Ստեփանյանը, Ա.Ներսիսյանը, Ա.Ավազյանը և ուրիշներ:

Կայ կերպարվեստի պատմական զարգացումն ամբողջացնող համ որա առանձին խոշոր շրջավորված, ճյուղերին ու ժանրերին նվիրված բովանդակալի աշխատություններ են Լ.Գոմեռովոյի, Մ.Սարգսյանի, Մ.Ավազյանի, Վ.Մաքսիմյանի, Ն.Ստեփանյանի, Ա.Աղասյանի մենագրությունները, ինչպես նաև 1979-ին հրատարակված «Очерки по истории армянского изобразительного искусства» կոլեկտիվ աշխատությունը:

Արվեստի ինստիտուտում կարևորվել է ղեկորատիվ-կիրառական արվեստի ուսումնասիրությունը: Երե անցյալում ժողովրդական արվեստի այդ բնագավառն ուշադրության էր արժանանում սոսկ ենագիտական ու ազգագրական տեսակետից, ապա Մ.Գավրյանի, Մ.Վազարյանի, Ն.Ստեփանյանի, Ի.Գրամբյանի, Զ.Թառայանի, Մ.Ստեփանյանի, Վ.Թաթևիկյանի գրքերում ու հոդվածներում շեշտը դրվում է ղեկորատիվ-կիրառական արվեստի առանձին բնագավառներին առնչվող գեղարվեստական խնդիրների վրա:

Սկզբնական շրջանում՝ 1958-ից մինչև 1963 թվականները, ինստիտուտին կից գործել է խնդիրների փորձարարական արվեստանոցը, որի աշխատակիցներն էին հայ առաջատար խնդիրների Ռուբեն Շահվերդյանը, Համայակ Բոլեյանը, Արտո Չարմաբջյանը և ուրիշներ, ովքեր ոչ միայն ստեղծում էին գեղարվեստական խնդիրներից կազմված կոմպոզիցիաներ, այլև զբաղվում հայկական կերամիկայի հարուստ ավանդույթների և մոտացված տեխնոլոգիաների ուսումնասիրությամբ:

Չավոթ, ժամանակի ընթացքում կիրառական արվեստի բաժինը փակվեց և այսօր ինստիտուտում մնացել է այդ ասպարեզի ընդամենը երկու մասնագետ: Մինչդեռ ղեկորատիվ-կիրառական արվեստի մի շարք բնագավառներ գիտնական-մասնագետների խիստ կարիք ունեն:

Ինստիտուտի կերպարվեստագետների առջև վաղուց ծառայած խնդիրներից է հայ կերպարվեստի ամբողջական պատմության շարադրումը՝ ակադեմիական բազմաեռադր հրատարակությամբ - առավել ևս, որ այսօր առկա են դրա համար անհրաժեշտ բոլոր նախադրյալները:

Արվեստի ինստիտուտի երաժշտագետներն անցած հիսուն տարիներին գրադվել են մի կողմից՝ հայ դասական և հոգևոր երաժշտության հարուստ ժառանգության, մյուս կողմից՝ ժամանակակից երաժշտական իրականության կանոնավոր ուսումնասիրության հարցերով:

Հայրենական երաժշտագիտական մտքի կարևոր ձեռքբերումներից են Ք.Քուլանյանի «Вопросы истории и теории армянской монодической музыки» (1958) աշխատությունը և Գ.Տիգրանյանի «Армянский музыкальный театр» (1956-1988) բառահատորը, որն արժանացել է Հայաստանի պետական մրցանակի:

Հայ դասական երաժշտության տարբեր ժանրերի զարգացման պատմությանը, ինչպես նաև Գրիգոր Նարեկացուն, Ներսես Շնորհալուն, Կոմիտասին, նոր և նորագույն ժամանակների հայ նշանավոր կոմպոզիտորներին են նվիրված Գ.Տիգրանյանի, Մ.Մուրադյանի, Ն.Թահմիզյանի, Գ.Գյոզյանի, Կ.Խուդաբաշյանի, Մ.Տեր-Սիմոնյանի, Մ.Ռուսկոյանի, Ա.Գրիգորյանի, Ռ.Մազմանյանի, Ա.Մատթոսյանի և այլոց մենագրությունները:

Հրատարակվել են տեսական բնույթի ժողովածուներ. Լ.Արաբյանի, Կ.Խուդաբաշյանի, Ա.Արևշատյանի, Լ.Երևզակյանի, Լ.Հակոբյանի աշխատությունները գիտականորեն ընդհանրացրել են հայկական երաժշտության առանձին փուլերի, իսկ Մ.Մուրադյանի և Գ.Գյոզյանի ուսումնասիրությունները՝ դրա ամբողջական զարգացումը:

Հայ միջնադարյան երաժշտության ուսումնասիրման նոր շրջանը կապված է Ն.Թահմիզյանի բազմաթիվ արժեքավոր աշխատությունների հետ: Երաժշտական միջնադարագիտության համար կարևոր նշանակություն ունեցան Ա.Արևշատյանի և Մ.Նավոյանի գիտական պրպատումները:

Արվեստի ինստիտուտի գերակա ուղղություններից է հայ մշակույթի դասականների ստեղծագործական ժառանգության ակադեմիական հրատարակության իրականացումը: Հայ դասական կոմպոզիտորների ժառանգության հրատարակության ասպարեզում կատարվել է ժանրակազմի ու հիմնարար աշխատանք: Հրատարակվել է հայ սիմֆոնիկ երաժշտության հիմնարար Ալեքսանդր Սպենդիարյանի Երկերի լիակատար ժողովածուն 11 հատորով (1943-1985, խմբագիր՝ Գ.Խուդաբաշյան) և Կո-

միտասի Երկերի ժողովածուն 14 հատորով (1960-2006, խմբագիրներ՝ Ռ.Արաբյան և Գ.Գյոզյան):

Արվեստի ինստիտուտի ժողովրդական երաժշտության բաժնում մեծ ուշադրություն է դարձվում հայ ժողովրդական և գուսանական-աշուղական երաժշտության նմուշների հավաքման, համակարգման, վերծանման և ուսումնասիրության գործին: Իրականացվել է ժողովրդական երաժշտության քարտավորում և անձնագրավորում: Ավանդական եղանակներով տարվող ուսումնասիրությունների կողքին, արդի երաժշտագիտական մտքին համընթաց՝ ինստիտուտի ֆոլկլորագետները ձեռնամուխ են եղել ժողովրդական երաժշտության համակարգչային բանկի ստեղծմանը:

Հրատարակության են պատրաստ «Հայ ավանդական երաժշտություն» մատենաշարի (գլխավոր խմբագիր՝ Կ.Խուդաբաշյան) 10 հատորները: Օրերս պետական պատվերի շրջանակներում լույս է տեսել մատենաշարի առաջին հատորը՝ «Հայ նվագարանային երաժշտություն. սյարեղանակներ» (2008): Տպագրության են հանձնված հաջորդ երկու հատորները:

Գծվար է գերագնահատել Արվեստի ինստիտուտի ծայնադարանային ֆոնդի նշանակությունը. առ երաժշտական-բանասիրական եզակի սկզբնաղբյուրի բացառիկ արժեք ունի: Գեռնա 1920-ական թվականներից մինչև մեր օրերը գրանցված գիտաբազային նյութերն ընդգրկում են ներկայիս Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերը, Երևանը, ինչպես նաև Վրաստանի հարավային շրջաններն ու Թբիլիսին, Աբխազիան, Ռուսաստանի Գաշնոթյան Ռոստովի մարզի և Կրասնոդարի երկրամասի հայաշատ վայրերը... Ծայնադարանում առկա է Արևմտյան Հայաստանից, արաբական և եվրոպական երկրներից հայրենիք ներգաղթած և այստեղ բնակություն հաստատած բանասացներից գրառված հազարավոր նմուշներ:

Թեև ինստիտուտի երաժշտագետների ձեռքբերումներն ակնառու են ու ծանրակշիռ, նույնքան շատ են այս ասպարեզում հետագա անկիթները: Անհրաժեշտ է շարադրել հայ միջնադարյան երաժշտության պատմությունը, իրականացնել դասականների (օրինակ՝ Տիգրան Չուխաճյանի) ստեղծագործական ժառանգության, նրանց երկերի լիակատար ժողովածուների ակադեմիական հրատարակությունը, որը կունենա ոչ միայն գիտական, այլև ուսումնակրթական, մշակութային, հասարակական և քաղաքական կարևոր նշանակություն:

Օրակարգի հրատապ խնդիրներից են 20-րդ դարի հայ երաժշտության պատմության ստեղծումը, երաժշտաժխական երգչական միջնադարյան ժողովածուների և հայ միջնադարյան մասնագիտացված երգարվեստին առնչվող պատմական ու տեսագիտագիտական մտքի հուշարձանների ուսումնասիրությունը:

Անցած հիսուն տարիների ընթացքում մեծ ու արգասավոր ուղի է անցել հայ քատերագիտությունը՝ փաստական նյութի կուտակումից դեպի արվեստագիտական ընդհանրացումներ, մենագրական աշխատություններից դեպի պատմության շարադրանք ու քատրոնի տեսություն:

Գրվել են քատերագիտական բազմաթույր աշխատություններ: Հայ դերասաններ ու բեմադրիչներ Պետրոս Աղամյանին, Սիրանուշիհին, Մարտիրոս Մնայանին, Հրաչյա Ներսիսյանին, Սուրեն Քոչարյանին, Արմեն Գուլակյանին, Վարդան Աճեմյանին, Հրաչյա Ղափլանյանին են նվիրված Ռ.Չարյանի, Գ.Ստեփանյանի, Ա.Ռիզակի, Լ.Հախվերդյանի, Բ.Հարությունյանի, Հ.Հովհաննիսյանի, Ի.Բաբայանի մենագրությունները: Հայկական բեմանկարչության ամփոփ պատկերն է սովել Լ.Խաչարյանը:

Հնովհաննիսյանի գրքերում և հոդվածներում գիտական հիմքերի վրա է դրվել հայ հին և միջնադարյան քատրոնի ուսումնասիրման գործը, գիտական հավաստիությամբ վերականգնվել ու հաստատվել է դրա բնորոշ, ինքնատիպ դեմքը: Բնագավառում կարևոր հանգրվաններ են «Թատրոնը միջնադարյան Հայաստանում. պատմության և տեսության հարցեր» (1978), ինչպես նաև «Միջնադարյան բեմ. քատրոն-եկեղեցի հարաբերություններ և հայ հոգևոր դրաման» (2004) աշխատությունները: Կիլիկյան Հայաստանի քատրոնին է վերաբերում Գ.Օրդյանի մենագրությունը:

19-րդ դարի և 20-րդ դարակզբի ազգային քատրոնի և քատերագիտական մտքի պատմությանը նվիրված Լ.Հախվերդյանի և Հ.Հովհաննիսյանի հիմնարար հետազոտություններն առանձնանում են մասնագիտական ճշգրիտ վերլուծումներով, ներկայացվող նյութի նորությամբ ու լայն ընդգրկումով: Լ.Հախվերդյանի «Հայ քատրոնի պատմություն. 1901-1920» (1980) աշխատությունն արժանացել է Հայաստանի պետական մրցանակի:

Գ.Ստեփանյանի եռաբառեր հետազոտության մեջ մանրամասն լուսաբանվում է արևմտահայ քատրոնի պատմությունը, իսկ Վ.Թերզիբաշյանի «Հայ դրամատուրգիայի պատմություն» (1959-1964) երկհատորյա աշխատության էջերում արտացոլվել են արևելահայ քատրոնի պատմության հանգուցային հարցերը: Հայկական բեմադրական արվեստի պատմությունը հանգամանորեն դիտարկել է Ա.Ռիզակը:

Մեծ տեղ է հատկացվել արդի հայ քատրոնին առնչվող խնդիրների ուսումնասիրությանը. կատարված հետազոտությունների առկայությունը հնարավորություն ընձեռեց լույս ընծայել «Հայ սովետական քատրոնի պատմություն» կոլեկտիվ աշխատությունը (1967):

Հայ քատերագիտության նվաճումը դարձավ Բ.Հարությունյանի կազմած՝ 19-20-րդ դարերի հայ քատրոնի պատմության տարեգրությունը հինգ հատորով (1961-1981), որն ընդգրկում է

1801-1960 թվականները: Հարությունյանի տրեման գործը շարունակում է Ա.Չոբյանը՝ հայ քատրոնի պատմության տարեգրությունը հասցնելով մինչև 20-րդ դարավերջ:

Արվեստի ինստիտուտին առընթեր շեքսպիրագիտության հայկական կենտրոնի կազմակերպումից հետո (1966) Ռ.Չարյանի ղեկավարությամբ գիտական ամուր հիմքերի վրա դրվեց Շեքսպիրի և հայ մշակույթի հետ կապված խնդիրների ուսումնասիրությունը: Կենտրոնի նպատակներից էր ամբողջացնել շեքսպիրյան երկերի հայերեն քարգմանությունները: Կենտրոնը հրատարակության է հանձնել հանճարեղ դրամատուրգի երկերի հայերեն լիակատար ժողովածուն: Պարբերաբար հրատարակվող «Շեքսպիրական» ժողովածուներում գիտական լուսաբանում են ստացել «Շեքսպիրը և հայ հասարակական միտքը», «Շեքսպիրյան քարգմանությունների պատմությունը», «Շեքսպիրյան պիեսների բեմական կյանքը հայ քատրոնում» և այլ բեմաներ: Կենտրոնին կից 1964-ին Շեքսպիրի ծննդյան 400-ամյա հոբելյանի առիթով ստեղծված, իր բնույթով եզակի Շեքսպիրագիտական գրադարանում հավաքված են ավելի քան 3000 գրքեր՝ աշխարհի 36 լեզուներով: Կենտրոնի և գրադարանի ստեղծման, ինչպես նաև հայկական շեքսպիրագիտության կարևոր պրոբլեմների մշակման գործում անգնահատելի է Ռ.Չարյանի վաստակը. նրա «Էջեր հայկական շեքսպիրապատմից» երկհատորյակը (1979-1981) արժանացել է Հայաստանի պետական մրցանակի:

Ինստիտուտում աշխատանքներ են տարվել հայ կինոյի տարեգրության, ֆիլմագրության և մատենագրության ստեղծման ուղղությամբ, մշակվել են կինոգիտության մի շարք խնդիրներ: Լույս են տեսել «Проблемы кино и телевидения» վերստատարած ժողովածուները (1980, 1984), կազմակերպվել տեսական կոնֆերանսներ ու գիտաժողովներ:

Հայկական կինոյի և հեռուստատեսության ուսումնասիրման բնագավառում նկատելի ձեռքբերումներ են Ա.Ռիզակի «Армянская художественная кинематография» (1963), Գ.Չարյանի «Армянское немое кино» (1976), Կ.Քալանթարի «Актер в армянском кино» (1982) աշխատությունները և վերջինիս «Очерки истории армянского кино» (2004-2008) երկհատորյակը:

1976-ից Արվեստի ինստիտուտում գործող արվեստագիտության գծով գիտական աստիճանաշնորհման մասնագիտական խորհրդի յուրահատուկ «իրավահաջորդը» դարձավ Հայաստանի Հանրապետության Բարձրագույն օրակալորման հանձնաժողովի օրոշմամբ 1995-ին ստեղծված խորհուրդը - միակից հանրապետությունում, որ գիտական աստիճաններ է շնորհում արվեստագիտության բոլոր բնագավառներում:

Այսպիսով անցած հիսուն տարիների ընթացքում Արվեստի ինստիտուտում մեծ աշխատանք է կատարվել: Մակայն առջևում դեռևս շատ անկիթներ ու խնդիրներ կան, որոնցից նշեն մի քանիսը:

Ժամանակին ինստիտուտի կազմում գործել է սփյուռքահայ արվեստի բաժինը, որը ղեկավարել է Գ.Ստեփանյանը: Հետագայում բաժինը փակվել է և, բնականաբար, կորույն նվազել է սփյուռքահայ արվեստով զբաղվող մասնագետների քիվը: Այսօր, երբ Մայր հայրենիքի և Սփյուռքի միջև մշակութային սերտ կապեր են հաստատվում, առավել քան սուր է գիտակցվում նաև սփյուռքահայ արվեստի հետևողական ու նպատակամետ ուսումնասիրման, գիտական իմաստավորման անհրաժեշտությունը: Եվ այդ առումով արդեն հուսադրող քայլերն են արվել վերջերս ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի և ՀՀ Սփյուռքի նախարարության միջև կնքված պայմանագրի շրջանակներում համաձայնություն է ձեռք բերվել Արվեստի ինստիտուտում սփյուռքահայ արվեստի բաժնի վերաբացման ուղղությամբ:

Ներկայումս ինստիտուտում չկա կինոյի բաժին: Կինոյի և հեռուստետեսության գծով կարգերի պատրաստումն ու մոտ ապագայում համապատասխան բաժնի կամ բեկուզ խմբի վերստեղծումը ևս ինստիտուտի առաջնահերթ խնդիրներից է:

Գիտական բազմակողմանի հետազոտության կարող ասպարեզներից է նաև հայկական պարարվեստը, այնինչ ինստիտուտում պարագիտության ընդամենը մեկ մասնագետ ունենք: Ծրագրված է հայ գեղարվեստական մշակույթի պատմական զարգացման համալիր ուսումնասիրության շրջանակներում առաջին անգամ շարադրել ազգային գեղարվեստական մշակույթի համադրական պատմությունը՝ ընդգրկելով հայ արվեստի բոլոր ճյուղերը:

Նախատեսում ենք հիմնարար հետազոտություններ կատարել հայ արվեստաբանության և բնագիտական մտքի պատմության բնագավառում, արվեստին նվիրված տերմինաբանական բառարանների և հանրագիտարանի ստեղծման միջոցով նպաստել մասնագիտական հայաժմի բառաուրբերի հարստացմանն ու հստակեցմանը:

Անհրաժեշտաբար հակիրճ գեկույցման մեջ հնարավոր չէ մանրամասնորեն ներկայացնել Արվեստի ինստիտուտի կեղարյա պատմությունն ու նրա հետագա անկիթները: Գա մի առանձին սովոր գրքի նյութ է, որն արդեն շարադրվում է և գալիք տարի լույս կտեսնի պետական պատվերի շրջանակներում:

Արարտս ԱՂԱՅԱՆ
ՀՀ ԳԱՄ Արվեստի ինստիտուտի սնտեն,
ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ,
արվեստագիտության դոկտոր, դոկտոր

յունն այս անգամ բեռավոր միայն էլ լիցիլիակա և բնապահպանական բարեփոխումների վրա:

Այս կապակցությամբ զարգացած շատ երկրներում հասարակության ակտիվ միջամտությամբ ստեղծվեցին բնապահպանական կազմակերպություններ, ընդունվեցին տարաբնույթ էկոլոգիական օրենքներ և օրենսդրական նորմատիվային ակտեր, մշակվեցին բնապահպանական օրենքների ներդրումը և կիրառումը ապահովող խիստ վերահսկողական ձևեր և միջոցառումներ:

Նշված միջոցառումները, իրոք, օգնեցին բարելավելու շրջակա միջավայրը և մարդու առողջության հետ կապված խնդիրները:

Յուրաքանչյուր պարզվեց, որ մասն ուղի ընտրած պետությունների քաղաքական և սոցիալական իրավիճակը մի ծայրահեղությունից անցավ մեկ այլ ծայրահեղության: Պետության տնտեսության տարբեր ճյուղերի և էներգետիկայի զարգացման համար ստեղծվեցին առավել խիստ անբարենպաստ պայմաններ:

Այս մտեցումը խիստ բացասական ազդեցություն ունեցավ զարգացած երկրների (ԱՄՆ, Կանադա, Ֆրանսիա, Գերմանիա և այլեր) արդյունաբերության, արդյունահանման և տնտեսական մրցունակության վրա:

Պարզվեց, որ էկոլոգիական և բնապահպանական, առաջին հայացքից ճիշտ քվազոլ, վերակառուցումները և օրենսդրական ակտերը ոչ թե բարելավում ու խթանում, այլ հակառակը արգելակում, իսկ լավագույն դեպքում, սահմանափակում են պետության տնտեսության զարգացումը:

Չնավորվեց էկոլոգրենապահպանական երկրորդ օրինաչափությունը:

Հասարակության զարգացումը միայն էկոլոգիական և սոցիալական շահանքներով անկասկած հանգեցնում է էկոնոմիկական և էներգետիկ ճգնաժամի:

Դժբախտաբար, նշված երկու օրինաչափություններն էլ վառ արտահայտված են եղել և այժմ էլ կան մեր հանրապետությունում:

Մինչև ինժեներական քվակալները Հայաստանը օրինակ էր առաջին օրինաչափության, ըստի որ հանրապետությունում տնտեսական զարգացումն ապահովող բոլոր միջոցառումները արդյունաբերական, հատկապես քիմիական համալիրների, ՋԷԿ-երի և այլ արտադրական օբյեկտների մասշտաբային, շինարարության և շահագործման, ինչպես նաև հանքերի արտահանման ու վերամշակման ընթացքում, հաշվի էր առնվում միայն նրանց տնտեսական անհրաժեշտությունը և օգուտները:

Հաշվի չէին առնվում դրանց հետագա հետևանքները, որոնք էին հողերի էրոզիան, քաղաքների և հոսքաջրերի քանակը և որակը, նրանց տարածման արեալը, բնական միջավայրի կողմից վնասակար արտանետումների յուրացումն ու չեզոքացման հնարավորությունները և այլն:

Հայաստանում անկախության հռչակումից հետո մենք մտանո եռնոտու էկոնոմիկական օրինաչափության օրինակը:

«Այլ էկոլոգները», «Կանաչներ» և տարբեր հասարակական և պաշտոնական կազմակերպությունների ներկայացուցիչներ միայն իրենց հայտնի «գիտականորեն հիմնավորված» փաստարկներով, պահանջեցին հայկական ատոմակայանի, «Նաիրիտ» գիտաարտադրական միավորման, Ալավերդու լեռնամետալուրգիական, Կանաչների քիմիական, Հրազդանի էներգո արդյունաբերական համալիրների և այլ ձեռնարկությունների անհատական փակումը, իբրև թե հանրապետության էկոլոգիական և բնապահպանական իրավիճակը լավացելու համար:

Ինչի՞ հանգեցրեց այս ամենը: Հանրապետության բնակչության ապրելակերպի վատացման, տնտեսության և էներգետիկայի ծայրահեղ լարված վիճակի ստեղծման, բնակչության հոգեվիճակի լարման, ծառերի համատարած հատման, սանիտարա-հիգիենիկ անձրևի վիճակի, սկսված անօդաչու ավիացիայի և այլն: Այս նկատառումով, կոլեկտիվի հատուկ կանգ առնել Սևանա լճի հիմնախնդիրների առաջացման պատճառների վրա, որպես էկոլոգ - բնապահպանական առաջին օրինաչափության ցայտուն օրինակ:

Դեռ անցյալ դարի քանական քվակալներին մասշտաբավոր է հանրապետության տնտեսության (հատկապես էներգետիկայի) զարգացման նպատակով լճի ջրերի օգտագործումը: Մտահաղացումը, իհարկե, ճիշտ էր, անհրաժեշտ էր Սևանա լճի բնական ռեսուրսները արդյունավետ օգտագործել: Բայց ինչպե՞ս և ի՞նչ քանակներով: Առանց էկոլոգիական հետևանքների բնարկման որոշվեց և 1933 թ. սկսվեց իրագործվել լճի մակարդակի իջեցումը: Մակարդակը տարեկան պետք է իջեցվեր 1 մետրով, այսինքն՝ 50 տարվա ընթացքում 50 մետրով - տարեկան բաց քողմեղավ 1025 X 10⁶ մ³ ջուր: Իջեցումից հետո լճի 1416 կմ² մակերեսից կմնար միայն 230 կմ²:

1949-1962թթ. - լճի մակարդակի ինտենսիվ տարեկան մեկ մետր իջեցման հետևանքով լճի ծավալը կրճատվեց 24 կմ³:

1947-1961 թթ. - Հայաստանի ԳԱԱ-ն հիմնովին դեմ լինելով լճի մակարդակի իջեցմանը, կատարեց նպատակային հետազոտություններ և արդյունքում պարզվեց, որ 50 մետրով լճի մակարդակի իջեցման ծրագիրը պահանջում է արժատական վերանայման՝

- 1. ազատված հողատարածքները անբերրի էին,
- 2. հիդրոէներգետիկայի հզորությունը արդեն անբավարար էր,
- 3. ապագայում հանրապետությունում >7

Հայաստանի ճնշման արժեքը ճյուղերի ինտենսիվացման և էֆեսնիվացման, ինչպես նաև բնակչության խտության մեծացմանը զուգընթաց, անցյալ դարում տեղի ունեցան լուրջ փոփոխություններ և շրջանակում մեծաճանաչ անբերողոցներ էկոլոգիական վերակառուցումներ, ինչը բնության և նրա դաշտերի նկատմամբ անհեռախոս սղառողական ֆաղափարների արդյունք էր:

Նշված ժամանակահատվածում Հայաստանի համար հասկանալի էր սարածախի և լայնածավալ ֆաղափարությունը, ինչը ուղեկցվել էր ֆաղափարի բնակչության խիստ կենտրոնացմամբ, մեծ և փոքր ֆաղափարի սարածական գերաճով և կառուցողական սարածներում բնական միջավայրի ոչնչացմամբ:

Էկոլոգիական և բնապահպանական քաղաքականության և ռազմավարության հիմնահարցերը Հայաստանի Հանրապետության օրինակով

Ռաֆայել Շովհաննիսյան

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, Կենսաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ

Բարձր ծանրաբեռնվածության հետևանքով Հայաստանի կենսաերկրագնդները լուրջ, իսկ որոշ բնական լանդշաֆտներ, անդարձելի բացասական փոփոխություններ են կրել:

Հայաստանի Հանրապետությունում և հատկապես նրա խոշոր քաղաքներում առաջացան իրենց բնույթով բարդ և ֆինանսատար սոցիալ-տնտեսական և էկոլոգիական խնդիրներ:

- Այսպիսով, էկոլոգիական չափանիշներն անտեսող քաղաքականությունը, դառնալով կենսական անհրաժեշտություն, լուծում է մարդու սոցիալական խնդիրները, բայց դրա հետ մեկտեղ խոշոր բացասական ազդեցություն է բողոնում «Մարդ-Բնություն» փոխհարաբերության ներդաշնակ զարգացման վրա:

Այնպիսով է, որ բնական լանդշաֆտների մեծ աղտոտվածության, բնական ռեսուրսների քանակի և որակի բացասական փոփոխությունների, անտառների նուստահանման, ֆլորայի և ֆաունայի տեսակային սուկցեսիայի կամ որոշների անհետացման, լեռնահանքային արդյունաբերության ոչ ճիշտ կազմակերպման, հեղեղատների և սողանքների առաջացման, հողերի էրոզացման և անապատացման, ջրային համակարգերի գետերի, լճերի, ջրամբարների էվոլյուցիաներ և աղտոտման պատճառները նրանց բնական ֆունկցիոնալ կապերի անբողոքուն խախտումներն են:

Նման պայմաններում, համապատասխան բնապահպանական կառույցների հետևանքային ռազմավարական նպատակով պետք է լինի հանրապետության տարածքում գոյություն ունեցող էկոլոգիական և բնապահպանական խանգարումների, խախտված էկոհամակարգերի առաջացման պատճառների բացահայտումը՝ նրանց վերականգնմանը, պահպանմանը և բնական ռեսուրսների ռազմա-օգտագործմանը աջակցելը:

Նշված բացառումները շտկող գործընթացի սկզբնակետը, տարբեր պետությունների համար, կարող է լինել տարբեր և յուրօրինակ՝ կախված տվյալ պետության տնտեսական և ժողովրդի կուլտուրայի մակարդակից:

Օրինակ՝ որոշ պետություններ, ունենալով տնտեսական զարգացման ցածր մակարդակ, պետության դեմոկրատացումը ստիպված են սկսել բնակչության հիմնական պահանջների բավարարման գործընթացից: Դրանք են ջրամատակարարումը, գազամատակարարումը, բնակարանով և մթերքով ապահովումը, էլեկտրաէներգիան, կապը, տեղեկատվությունը և այլն:

Այլ պետություններ, ունենալով զարգացման առավել բարձր մակարդակ, ժողովրդավարական ուղին սկսում են տարաբնույթ, առավել բարդ սոցիալական և տնտեսական խնդիրների լուծումներից, որոնք լրացնում և որակապես ավելի են բարձրացնում բնակչության կենսամակարդակը:

Անկախ այն բանից, թե ժողովրդավարական ուղին բռնած պետությունը տնտեսական զարգացման ինչպիսի մակարդակ է ունեցել, նրանց բոլորի համար էկոլոգիան քաղաքականության և ռազմավարության, ինչպես նաև բնական միջավայրի պահպանության օրինաչափությունների ճիշտ ներդրումը տվյալ պետության կայուն զարգացման պրոցեսի հանգուցային բաղադրիչն է և նրա ժողովրդավարման հիմնարարներից մեկը:

Այս հանգամանքը ժամանակին ընդունել են տնտեսապես զարգացած պետությունների ղեկավար կառույցները: Պետության դեմոկրատացման բարձր մակարդակին հասնելու համար նրանք օգտագործել են նախկինում բույլ տրված էկոլոգիական և բնապահպանական սխալների բազմակողմանի վերլուծության արդյունքները, հասկանալով, որ նշված հարցի վերաբերյալ ցուցաբերած սխալ մտեցումները կամ շտապողականությունը, կարող է հանգեցնել պետության քաղաքականության ճգնաժամային իրավիճակի:

Այստեղ անհրաժեշտ է ցուցաբերել չափված մտեցում: Գոյություն ունեցող անցումային օրինաչափությունների կրկնօրինակումը և տեղայնացումը կատարել մտածված, գիտականորեն հիմնավորված, անպայման հաշվի առնելով հասարակության կարծիքը:

Այսպիսով, հարց է առաջանում, թե ինչի՞ց պետք է սկսի ժողովրդավարական ուղու վրա կանգնած նորաստեղծ պետությունը:

Ամեն ինչ կախված է պետության տնտեսության երակետային մակարդակից:

Այն պետությունները, որոնք նոր պետք է անցնեն ինդուստրիալացման փուլը, ունեն որոշակի առավելություն այն պետությունների նկատմամբ, որոնք տասնամյակներ առաջ են անցել այդ փուլը:

Համեմայն դեպք, որպեսզի չկրկնվի դեմոկրատացման ճա-

նապահանք արդեն անցած պետությունների սխալները, նոր պետության դեմոկրատացումը և նրա առաջընթացը ապահովելու համար պետք է որոշել էկոլոգիական և բնօգտագործման բնագավառներում տվյալ պետությանը յուրահատուկ գերակայությունները՝ ճշգրտված պետության աշխարհագրական, տնտեսական, սոցիալական, առողջապահական, տեղեկատվական, պատմամշակութային առանձնահատկություններով և հարևան պետությունների հետ ունեցած տնտեսական և քաղաքական փոխհարաբերություններով:

Տնտեսության հարաճուն ձևավորման և նրա կայուն զարգացման համար, ժողովրդավարացման ուղու վրա գտնվող երիտասարդ պետությունները, ունենալով տնտեսական արագ աճի և արտաքին շուկա դուրս գալու ռեալ հնարավորություններ, կարող են գերծ մնալ շրջակա միջավայրի դեգրադացումից, օգտագործելով համաշխարհային փորձը և տվյալ պետությանը յուրահատուկ էկոլոգիական ու բնապահպանական գիտականորեն հիմնավորված օրինաչափությունները:

Էկոլոգիական և բնապահպանական հիմնախնդիրների լուծման անկարողությունը կարող է պետությանը զրկել բնակչության աջակցությունից, ինչը ուղի է ժողովրդավարական ռեֆորմի փլուզման վտանգով, հատկապես, եթե հաշվի առնենք, որ միջազգային շուկայական մրցակցությանը մասնակցելու և դիմակայելու համար, արդեն պարտադիր է դարձել տնտեսության արտադրողական բոլոր ճյուղերում և նրանց արտադրողական գործընթացներում, էկոլոգիական չափանիշների պահպանումը:


Բնական ռեսուրսների օգտագործման ապառողական քաղաքականությունը կարող է վիժեցնել պետության բարգավաճման կայուն առաջընթացի հիմքերը:

Ընդհանրացնելով կարելի է ասել, որ տնտեսության հիմնախնդիրների չմտածված, գիտականորեն չհիմնավորված լուծումները, որոնք ամբողջությամբ կամ մասնակիորեն կապված են բնական պաշարների օգտագործման հետ, և հաշվի չեն առնում նրանց էկոլոգիական հետևանքները, հետագայում հանգեցնում են տնտեսական, էներգետիկ, էկոլոգիական, և շրջակա միջավայրի պահպանման գործում դժվար լուծվող, ֆինանսատար, նոր հիմնախնդիրների առաջացմանը:

Բնարկված հարցի եզրահանգումը կոնկրետացվում է էկոլոգրենապահպանական առաջին օրինաչափությանը, որն է՝ Հասարակության զարգացումը միայն էկոնոմիկական և էներգետիկ շահանքներով անկասկած հանգեցնում է էկոլոգիական ճգնաժամի:

Արդեն ես նշեցի, որ անցյալ դարում աշխարհի շատ պետություններում, տեխնիկական հեղաշրջումը ուղեկցվում էր կենսոլորտի ցամաքային, ջրային և օդային ենթահամակարգերի վերակառուցմամբ և աղտոտմամբ, որի էկոլոգիական հետևանքները անտեսվում էին:

Արդյունքում մակերևութային ջրերում, հողում, օդում, սննդային շղթաների առանձին օղակներում հայտնաբերվեցին էվոլյուցիոնոր, աղտոտող և թունավոր նյութեր, որոնք լուրջ բացասական ազդեցություն ունեցան բնակչության առողջության վրա: Այդ սխալները ուղղելու համար մարդկության ուշադրուբ-



Հայտնի հայագետներ Վալենտինա Կալցուլարին և Ռուբեն Գալչյանը արժանացան ՀՀ ԳԱԱ պատվավոր դոկտորի կոչման

Հայաստանում գիտության զարգացմանը նպաստելու համար ՀՀ ԳԱԱ նախագահությունը դասավոր դոկտորի կոչում են հայտնի հայագետներ Վալենտինա Կալցուլարին և Ռուբեն Գալչյանին: ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանն իր ընդհանուրական ելույթում հասուկ նեցեց արժանատի մասնակցության հայագետների հայաճանաչման և համագործակցության արդյունավետության մասին:

Վալենտինա Կալցուլարի

Ժնեի համալսարանի հին և ժամանակակից հայերենի ու գրականության պրոֆեսոր, նույն համալսարանի հայագիտական հետազոտությունների կենտրոնի և հայկական գրադարանի տնօրեն: Հայագիտական հետազոտությունների միջազգային ասոցիացիայի նախագահ: Ավարտել է Բոլոնիայի համալսարանի դասական բանասիրության և փիլիսոփայության ֆակուլտետը (հիմնականում հայագիտության ուղղությամբ): Ունի նաև Լոզանի համալսարանի ֆրիստուդենտական պատմության և աստվածաբանության մասնագիտության դիպլոմ: 1995 թ. ստացել է դոկտորի աստիճան հայագիտության գծով Միլանի կաթոլիկական համալսարանում: Գաղարկներ է վարել Փարիզի, Վենետիկի համալսարաններում: Մի շարք գիտական կազմակերպությունների անդամ է:

Նրա ղեկավարությամբ կազմակերպվել է անց են կացվել բազմաթիվ հայագիտական միջազգային գիտաժողովներ Ֆրանսիայում, Շվեյցարիայում, Իսրայելում, Նիդեռլանդներում:

Հեղինակ է գրքերի և բազմաթիվ հոդվածների: Հրատարակել է նաև «Հին և միջնադարյան Հայաստանի գրքի և քարի արվեստը» (գիրք-կատալոգը նվիրված նույնանուն ցուցահանդեսին, Ժնե, 2007): Շուտով կիրառարկվի նրա «Հայկական պարականոն գրվածքները» Corpus Christianorum շարքով:

Ռուբեն Գալչյան

Ռուբեն Արամի Գալչյանը ծնվել է 1938 թ. նոյեմբերին Իրանի Թավրիզ քաղաքում, Մեծ Եղեռնի Վանից տարագիր գաղթականների ընտանիքում: Թեհրանում միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո, Ռ. Գալչյանը ստացել է կրթաբարձակ սովորելու Մեծ Բրիտանիայի Բիրմինգհամ քաղաքի Աստոն համալսարանում, ուր ուսանել է ճարտարագիտություն: Ճշգրիտ սարքերի ճարտարագետի մասնագիտական դիպլոմներ է ստացել ԱՄՆ-ի Հոնոլուլու, Ֆորթորթ և Թեյլոր ընկերություններից, ինչպես նաև մենեջմենթի դիպլոմ ԱՄՆ-ի Ուարթոն ինստիտուտից:

Շուրջ երկու տասնյակ տարիներ աշխատել է Իրանի պետական նավթային ընկերության, ինչպես նաև Բոսնիա ճարտարագիտական խորհրդատվական կազմակերպության մեջ ծրագրավորման, նախագծման և դիզայնի, հաշվարկելու և շինարարությունը վերահսկելու ծրագրերում որպես պատասխանատու ղեկավար: Նույն գործը շարունակել է Լոնդոնի և Փարիզի տարբեր ճարտարագիտական կազմակերպություններում:

Վաղ տարիքից հետաքրքրված լինելով աշխարհագրությամբ և բարոնեգրությամբ՝ 1976-ից ի վեր, ավելի քան 30 տարի զբաղվում է աշխարհագրական հետազոտություններով: 1981-ին Լոնդոն տեղափոխվելով առիթ է ունեցել օգտվելու Էլդրոպայի և ԱՄՆ գրադարաններում ու բանգրաններում եղած քարտեզագրական հարուստ ժառանգությունից:

Հեղինակ է երեք մենագրությունների: Առաջինը «Հայաստանի պատմական քարտեզներ, քարտեզագրական ժառանգություն» (անգլերեն) վերտառությամբ լույս է տեսել 2004 թ.: Այստեղ ի մի են բերվել աշխարհի տարբեր գրադարաններում

ու բանգրաններում պահպանված, մ.թ.ա. 6-րդ դարից մինչև մեր օրերը վերաբերող կարևորագույն 161 քարտեզները, որոնց մեջ պատկերված է Հայաստանը: Երկրորդ աշխատությունը լույս է տեսել 2005 թ. Երևանում «Հայաստանը համաշխարհային քարտեզագրության մեջ» վերտառությամբ, որն անգլերեն հատորի վերափոխված տարբերակն է հայերեն և ռուսերեն լեզուներով: Այս հատորը պարունակում է ավելի մեծ թվով քարտեզներ և բացատրություններ: Երրորդ մենագրությունը լույս է տեսել 2007 թ. անգլերեն և հայերեն լեզուներով և կոչվում է «Վուլկանից հարավ երկրները միջնադարյան քարտեզներում: Հայաստան, Վրաստան և Ադրբեջան»: Պրն. Գալչյանը Հայաստանին վերաբերող քարտեզագրական հարուստ ժառանգությունը աշխարհին է ներկայացնում ոչ միայն գրքերով ու հոդվածներով, այլ նաև ԱՄՆ-ում ու Եվրոպական երկրներում կարգավոր դասախոսություններով, կուրսներով տարաբնույթ գիտաժողովներում ու մամուլում:

Պրն. Գալչյանը նաև ակտիվորեն ներգրավված է Մեծ Բրիտանիայի հայկական համայնքի կյանքում, եղել է Լոնդոնի ՀՄԷՄ մարզական և մշակութային կազմակերպության նախագահը, Լոնդոնի հայ եկեղեցական և համայնքային խորհրդի գործադիր վարչության նախագահը, ուր տարի շարունակ Մեծ Բրիտանիայում ՀՀ դեսպանության Պատվոն հյուպատոս: 1992-ից ի վեր նա Լոնդոնի «Էլդրոպայի» քարտեզագրական կազմակերպության նախագահն է: Այդ կազմակերպության խողովակներով իրականացվել է ավելի քան 10 մլն. դոլարի Հայաստանին օժանդակության (հիմնականում ասոցիացիայի անունով) ծրագրեր: 2000 թ.-ից ի վեր նա նաև «Հայաստանի բարեկամներ» քարտեզագրական կազմակերպության գործադիր տնօրենն է, որի շրջանակներում իրագործվել են 1 մլն. դոլարի արժողության շուրջ 200 ծրագրեր:

2006 թ. սեպտեմբերին արժանացել է Վանաձորի Պատվոն քաղաքացու կոչման:

Էկոլոգիական և բնապահպանական քաղաքականության ...

Կզգացվել խմելու ջրի խիստ դեֆիցիտ: 26 Այդ ժամանակ որոշվեց լճի ջրբազորումները կրճատել մինչև 500 մլն մ³: -1961 թ. - Լճի էկոհամակարգը վերականգնելու նպատակով որոշվեց Արփա գետի ջրերից 250 մլն մ³ տեղափոխել Սևանա լիճ և չքույլատրել մակարդակի իջեցումը 18 մետրից ավել: 1964 -1965 թթ. տեղի ունեցավ լճի ծաղկում միաբնակ ջրի-մուտների ամենատարածված տեսակներով՝ ցիանոբակտերիերով: - 1965-1980 թթ. - Առաջ քաշվեցին էկոլոգիապես անգրագետ բազմաթիվ ծրագրեր, մոնիտորինգային քաղաք, արհեստական անձրևներ, ալյուրներ և այլ անմտածված առաջարկներ:

- 1978 թ. - ԽՍՀՄ կենտրոնական կոմիտեի և Մինիստրների խորհրդի N 812 որոշմամբ, ԽՍՀՄ գիտության և տեխնիկայի պետական կոմիտեն ընդունեց Սևանա լճի մակարդակի բարձրացման միջին որոշման և բնական ռեսուրսների որակի և բանակի վերականգնման վերաբերյալ հետազոտությունների ծրագիր:

Սևանա լճի հիմնականները հանրապետական մակարդակից անցան միութենական մակարդակի:

1981 թ. - Արփա-Սևան թունելը բացվեց: Այս ժամանակահատվածում լճի մակարդակը արդեն իջել էր 20,2 մետրով, իսկ լճի ջրհավաք ավազանում տնտեսության հզոր զարգացման հետևանքով, անհամեմատ մեծացել էր լիճ թափվող կեղտաջրերի, հոսքաջրերի, օգտագործված օրգանական և անօրգանական պարարտանյութերի քանակները:

- 1982 թ. լճում անհետացան իշխանի երկու ռասաները, բարձրակարգ ջրային բույսերը, որոնք արդեն փոխարինվել էին միաբնակ ջրիմուռներով: Լուսաբափանցելիությունը 9-14 մ-ից փոքրացավ մինչև 1-1,5 մետր:

Լճում սկսվեց կուտակվել օրգանական նյութ, որի հետևանքով խիստ կրճատվեց թրթուռների քանակը: Լուրջ խախտումներ տեղի ունեցան լճային էկոհամակարգի բոլոր ֆունկցիոնալ փոխհարաբերություններում:

1982-1985 թթ. - ԽՍՀՄ ՊՏՊԿ որոշմամբ, ԽՍՀՄ 39 գիտատեղակայանի ինստիտուտների ամբիջական մասնակցությամբ, ուսումնասիրվում և որոշվում է լճի մակարդակը բարձրացնել 6 մետրով մինչև 1903,5 մետր միջր:

- 1985-1991 թթ. - Արփայի ջրերի տեղափոխումից հետո (250 մլն/մ³) լճի մակարդակի անկումը կասեցվեց, որի արդյունքում լճում խրանվեց ղեկավարված պրոցեսների դրական ընթացքը: Սևանը էկոլոգիապես անցավ մեզոտրոֆ վիճակի:

1991 թ. - կանգնեցվում է Եղվարդի ջրամբարի շինարարությունը (228 մլն/մ³):

1991-1995 թթ. - լճից բաց թողնվեց 4,5 մլրդ մ³ ջուր, որի պատճառով լճի մակարդակը իջավ ևս 2 մետրով:

- 1996-1998 թթ. - Հայաստանի կառավարության առաջարկով Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ և մասնակցությամբ նորից կրկնվում են գիտատեղակայանում ուսումնասիրությունները: Արդյունքում նորից որոշվում է լճի մակարդակի բարձրացման անհրաժեշտությունը մինչև 1903,5 միջր:

- 2001 թ. - ՀՀ Աժ-ի կողմից ընդունվում է Օրենք Սևանա լճի մասին:

- 2001 թ. - Սկսվում է մինչև օրս շարունակվում է լճի ավա-

մերձ գոտիների անօրեն կառուցապատում:

- 2004 թ. - Առաջ է քաշվում Սոսորում ոսկու հանքավայրի վերամշակման ձեռնարկության օրենքով արգելված կառուցման ծրագիրը, որը ՀՀ ԳԱԱ հիմնավորմամբ կասեցվում է:

- 2004 թ. - Ավարտվում է Ռոտտանի թունելի աշխատանքները, բայց մինչև օրս Սպանդարյանի ջրամբարից ոչ մի լիտր ջուր չի տեղափոխվել Սևանա լիճ:

- 2008 թ. - Աժ - ի կողմից, «Սևանա լճի մասին օրենքում» 2 անգամ կատարվում է ջրբազորումների քանակի փոփոխություն 120 միջր, 270 և 270-ից 360 մլն մ³:

- 2008 թ. - նորից առաջ է քաշվում Սոսորում ոսկու հանքավայրի վերամշակման ձեռնարկության կառուցման հարցը:

- 2005-2008 թթ. - Միզ ձկնատեսակի պաշարների խիստ անկում (գերաբարյունահանում):

Այլ խոսքով, Սևանա լճի փրկության խնդիրը մնում է այժմեական և խիստ կարևոր մեր հանրապետության համար:

Ամփոփելով քննարկվածը, ինչպես նաև հաշվի առնելով վերոհիշյալ Էկոլոգիապահպանական երկու օրինաչափությունները՝ կարելի է ձևակերպել «Երեք - է»-երի օրինաչափությունը:

Էկոնոմիկան, էներգետիկան և էկոլոգիական այն երեք հիմնաբարերն են, որոնց փոխհարաբերությունների ճիշտ կարգավորմամբ կառուցվում է ցանկացած քաղաքակիրք պետության սոցիալական և էկոնոմիկական ներդաշնակ զարգացման բարձրագույն մակարդակը, որը հնարավոր է միայն այն դեպքում, երբ երեք ուղղությունների միջև ստեղծվում է մարդու կողմից ղեկավարվող, ուղիղ և հետադարձ փոխկարգավորող կապը:

Անս թե ինչը չգիտեին և չէին հասկանում մեր «բնապահպանները», որի պատճառով, ինչպես դուր գիտեք, հանրապետությունում նոր, տարաբնույթ և դժվար լուծվող բազմաթիվ տնտեսական, էներգետիկ և էկոլոգիական խնդիրների առաջացման պատճառ դարձան:

Կուզեի հատուկ շեշտել որ «Երեք է»-երի օրինաչափության յուրացումն անհրաժեշտ է ոչ միայն դեմոկրատացման ուղին բռնած պետությունների ղեկավար աշխատողների ու տնտեսության տարբեր ճյուղերում աշխատող մասնագետների լայն շրջանների, այլ նաև այն էկոլոգների, կենսաբանների, բժիշկների, երկրաբանների, քիմիկոսների և այլոց համար, որոնց վերաբերումները հստակ է կուսական բնության նկատմամբ և որոնք մոտանում են, որ մարդկության զարգացման համար բացի էկոլոգիական «մարքայությունից», անհրաժեշտ է տնտեսության և էներգետիկայի կայուն առաջընթաց:

Պետության քաղաքականությունը և տնտեսության զարգացման ձևերը չեն կարող լինել քաղաքակիրք և ունենալ դրական արդյունք, եթե նրանք չեն ապահովում պետական կառուցվածքի կայունությունը, բնակչության բարձր կենսամակարդակը, ազգային և էկոլոգիական անվտանգությունը:

Այս հարցում իր կարևորությամբ լուրջ բաժնեմաս ունի նաև հարևան պետությունների հետ ունեցած միջպետական հարաբերությունների մակարդակը:

Կառավարող, օրենսդիր և իրավական մարմինները պետք է իմանան, որ ցանկացած պետություն, որպես ինքնուրույն սոցիալ-տնտեսական և վարչական միավոր, էկոլոգիական տեսանկյունից կազմում է ամբողջական էկոլոգա-աշխարհա-

գրական տարածաշրջանի մի մաս, որի մեջ կարող են մտնել տնտեսական զարգացման տարբեր մակարդակ և տարբեր քաղաքական կառուցվածք ունեցող տասնյակ պետություններ:

Օրինակ՝ Կուր գետի ավազանով Հայաստանն իր աշխարհագրական տարածքի մի մասով Վոսատանի և Ադրբեջանի սահմանամերձ տարածքների հետ կազմում է մեկ է-կոլոգա-աշխարհագրական տարածաշրջան, իսկ Արարս գետի ավազանով՝ Թուրքիայի, Իրանի և Ադրբեջանի հետ, այլ էկոլոգա-աշխարհագրական շրջան:

Այստեղից պարզ է, որ էկոլոգիական և բնապահպանական խախտումները միևնույն էկոլոգիական տարածաշրջանի մեջ մտնող ցանկացած պետությունում, անկախ նրանց փոխհարաբերություններից, հարևան պետությունների սահմանամերձ տարածքներում ունենում են բացասական էկոլոգիական և բնապահպանական հետևանքներ:

Պարզ է, որ «Էկոլոգիապես ճգնաժամային» պետությունը, անկախ իր տնտեսական հնարավորություններից, վաղ թե ուշ պարտավոր է կենտրոնացնել հնարավոր բոլոր կարողությունները և բարելավել իր վարչական տարածքի էկոլոգա-բնապահպանական իրավիճակը:

Հակառակ դեպքում նա ստիպված կլինի այդ անել հարևան պետությունների տնտեսական կամ քաղաքական ճնշման տակ:

Այդ պատճառով էկոլոգիական քաղաքականությունը ցանկացած քաղաքակիրք երկրում համարվում է պետության ընդհանուր քաղաքականության կարևոր ուղղություններից մեկը, ինչպես նաև այն հիմնական ուղին, որն ապահովում է միջպետական քաղաքական, սոցիալական, տնտեսական, էկոլոգիական և մշակութային շահավետ փոխհարաբերություններ:

Իմ կարծիքով, Հայաստանում էկոլոգիական քաղաքականության վերը նշված մոտեցումները և վերակառուցումները կարող են նպաստել մեր հասարակության երկարատև համաշխարհային կայուն զարգացմանը, նրա կենսապայմանների բարելավմանը և Հայաստանի ինքնատիպ բնության վերականգնմանը և պահպանմանը:

Այսպիսով, Հայաստանի Հանրապետության էկոլոգիական և բնապահպան անմխիթար իրավիճակը բարելավելու, մարդու և բնության սանհիտարատրոֆիկոլոգիական բարենպաստ իրավիճակը վերականգնելու և պահպանելու համար, հանրապետության բնակչության և համապատասխան հասարակական կազմակերպությունների ակտիվ մասնակցությամբ, անհրաժեշտ է մշակել հանրապետության էկոլոգիական և բնապահպանական իրավիճակի բարելավման ամբողջական ազգային ծրագիր:

Միայն վերը նշված ճանապարհներով մեր կյանքում Հայաստանի հողային, ջրային և բնական այլ ռեսուրսների, և հատկապես Սևանա լճի ամբողջական էկոհամակարգի վերականգնման, պահպանման և արդյունավետ օգտագործման, ինչպես նաև մեր հանրապետության էկոլոգիական և կայուն զարգացման խնդիրների լուծմանը, ինչը ԳԱԱ նախագահության կողմից ամրագրվել է Հայաստանի Հանրապետության գիտության և տեխնիկայի զարգացման գերակայող ուղղությունների ցանկում:



Սրբազան լեռան խորհուրդը...

Արարատը աշխարհի ամենաբարձր կետն է, քանի որ այն հայ մարդուն հասանելի է աշխարհի բոլոր ծայրերից: Բազմաթիվ խորհրդանիշերի մեջ հենց Արարատն է հայ ժողովրդի համար ամենասրբազան ու խնկարկելի խորհրդանիշը: Թերևս հենց այս մասին է «Արարատ. Հայոց անմահության խորհուրդ» վավերագրական կինոնկարը, որի պրեմիերան օրերս տեղի ունեցավ «Մոսկվա» կինոթատրոնում:

Կինոնկարի սցենարը գրել է պատմաբան, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն Աշոտ Մելքոնյանը:

Ինչպես նշում է Ա. Մելքոնյանը. «Չավազանց դժվար էր ֆիլմի ընդամենը 14 էջանոց սցենարում էական բնութագրերով ներկայացնել Արարատի կենսագրությունը՝ սերտորեն շաղկապված հայոց ճակատագրի հետ»:

Շուրջ մեկ տարի նա աշխատել է սույն սցենարի վրա, ապա փորձառու մոնտաժող Արթուր Սողոմոնյանի հետ աշխատանքային համագործակցության արդյունքում այն վերածվել է հուզախուրդով հարցերով ու հարցազնախոսությամբ վավերագրական ֆիլմի:

Արարատ լեռը հայոց պատմության հավաքական հոլովույթի մեջ, - ահա. ֆիլմի առանցքը՝ նրա այժմի ու օմեզան:

Ամեն ինչ պատմում ու վերաբերվում է Արարատին, աղերսվում նրան, ներկայացնելով լեռան վերաբերյալ աշխարհագրական, պատմական ու դիցաբանական փաստաթուղթ տվյալներ, նրա անառիկ գագաթը մագլցելու տարբեր դարաշրջաններում կատարված փորձերն ու դրանց արդյունքները:

Ֆիլմից տեղեկանում ենք, որ սկսած 4-րդ դարից պարբերաբար փորձեր են արվել նվաճելու նրա մշտապես ձյունածածկ գագաթը: Ավանդությունը պատմում է, որ հայոց Տրդատ Մեծ արքան կարգադրել է քարեր բերել Արարատի գագաթից: Իսկ դեռևս V դարում Հակոբ Մծբնեցի եպիսկոպոսը փորձել է վերելք կատարել դեպի լեռան գագաթը:

Հինգերորդ դարից մինչև 1829 թվականը բազմաթիվ անհատներ և արշավախմբեր են փորձել բարձրանալ նրա գագաթը: Եվ միայն 1829 թ. սեպտեմբերի 27-ին, Գորպատից ժամանած պրո-

ֆեսոր Պարրոտին, որի արշավախմբում էր նաև յուսապաշտառ Խ. Աբովյանը, հաջողվում է հյուսիս-արևմտյան երթուղով բարձրանալ սրբազան լեռան գագաթը: Մեկ ամիս անց՝ հոկտեմբերի 27-ին, նույն արշավախումբը բարձրանում է Սիսի գագաթը: 1846 թ. սեպտեմբերի 18-ին, Խ. Աբովյանը, այս անգամ անգլիացի ճանապարհորդների հետ, երկրորդ անգամ է նվաճում 5165 մետր բարձրությամբ գագաթը:

Ֆիլմը պայմանականորեն կարելի է բաժանել երկու մասի. պատմական և գրական մաս: Գրական հատվածում հնչում են հայ բանաստեղծների՝ դարեր շարունակ Արարատին ձոնված բանաստեղծություններն ու երգերը:

«Պիտի հասնեի՞ք կատարի դ», - սպիտաբաշտ գրող Անդրանիկ Ծառուկյանի այս հիասքանչ տողի քաղցրությամբ ու երջանկությամբ հայ լեռնագնացների ու պատմաբանների միացյալ խումբը լիովին վայելեց 2007 թ. օգոստոսի 10-ի առավոտյան՝ ժամը 8 անց կեսից սկսած, երբ սրբազան գագաթին արդեն ծածանվում էր հայոց եռագույնը:

Իսկ օրը բնավ պատահական չէր ընտրված: Օգոստոսի 10-ին կնքվել է Սևրի դաշնագիրը, որով Հայաստանի Հանրապետությունը ընդգրկելու էր 163 հազար քառ. կմ տարածք:

Հենց նույն օրը հայոց օրհներգը հնչեցրած տղաները հաստատ գիտեն ու համոզված են, որ վերստին գալու է արդար հատուցման օրը:

Ֆիլմում հնչում են հատվածներ Կոմիտասի, Մակար Եկմալյանի, Ռոբերտ Ամիրխանյանի, Արա Գևորգյանի ստեղծագործություններից:

«Արարատ. Հայոց անմահության խորհուրդը» ֆիլմը հեղինակները նվիրել են Խ. Աբովյանի ծննդյան 200-ամյակին և Արարատի գագաթը Պարրոտի արշավախմբի հաղթանակով 180-ամյա տարեդարձին:

Աստվածաշնչյան սրբազան լեռը, որը 5000 տարի առաջ վերստին փրկեց մարդկային ցեղը, ընդմիջտ դրոշմված է հայ ժողովրդի պատմական ճակատագրին:

Արմեն ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Պարզ գիտ. քննաձույն

Միջազգային գիտական ճանաչման արժանացած մեր հայրենակիցները

Նաիրա ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

Օրերս Հայկական հանրագիտարանի «Ով ով է. հայեր» խորագիրը կրող առաջին հատորն էի աչքի անցկացնում, երբ բազում երախտավորների շարքում հայացքս մեկնեմ կենտրոնացավ ծանոթ անուն-ազգանվան վրա՝ Հովակիմյան Նաիրա Վիկտորի: «Հաստատ իմ հայրենակից Տավուշ-շամշադիցի Վիկտոր Հովակիմյանի դուստրն է», - անցավ մտրոլս, և անհամբեր զանգահարեցի նրան:

Ենթադրությունս ոչ միայն ճշտվեց, այլև պարզվեց, որ Նաիրայի անունը պատվավոր տեղ է զբաղեցնում նաև ամերիկյան "Who's who in America" («Ով ով է Ամերիկայում») հանրագիտարանում: Ծանոթանալով ներկայացված տվյալներին, տողորվեցի հայրտության անմասնադեպ զգացումով, և արդյունքում ծնվեց ահա այս հոդվածը:

Նաիրան, 1988թ. զերագնացությամբ ավարտելով Երևանի պետական լսարանի մեխանիկամաթեմատիկական ֆակուլտետը, այնուհետև ասպիրանտուրան և 1993թ. Մոսկվայում վալյուն կերպով պաշտպանելով քեկնածուական աստենախոսություն, ուր է դրել մեծ կյանքի շեմին՝ մշտապես երախտապարտ մնալով իր գիտական ղեկավարին՝ Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ Արիկ Մելիքյանին: Առաջին աշխատանքային մկրտությունն ստացել է ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի մեխանիկայի ինստիտուտում՝ դրսևորելով հետազոտական աշխատանքի վալյուն ընդունակություններ:

Ժամանակները գուգաղիպել են ԽՍՀՄ փլուզման հետ, և գիտության նվիրյալը, երկրում տվյալ շրջանում մասնագիտության մեջ լիովին դրսևորվելու հեռանկար չտեսնելով, ընդունել է Գերմանիայի Շտուտգարդի համալսարանում աշխատելու առաջարկը: Այնուհետև հրավիրվել է Ֆրանսիա՝ ընդգրկվելով ինֆորմատիկայի և ավտոմատիկայի կենտրոնի հետազոտողների այն խմբում, որը գիտական կոնֆերանսի պետք է մեկնեք Ճապոնիա: Ահա այդ կոնֆերանսում էլ Նաիրա Հովակիմյանն արժանանում է գիտական լավագույն աշխատանքի համար սահմանված հեղինակավոր մրցանակին: Դրանից հետո տարբեր երկրների գիտական հեղինակավոր կենտրոններից նրա անունով ստացվում են աշխատանքային հրավերներ:

Սկզբում նա աշխատում է Իսրայելում, որտեղից էլ, ի վերջո, հանգրվանում է ԱՄՆ-ում, ուր տաս տարի գիտական բեղմնավոր գործունեություն է ծավալում Վիրջինիայի ճարտարագիտական և պետական համալսարանների ավիացիայի ու օվկիանոսագիտության ֆակուլտետներում: Տեղի արտադրական կառույցների հետ հաստատած սերտ կապերը հնարավորություն են ընձեռում նրա տեսական հետազոտությունների արդյունքները կիրառել գործնականում: Աշխատանքները հիմնականում վերաբերում են հեռուստահաղորդակցության, ռոբոտատեխնիկայի, անկանխատեսելի պայմաններում ինքնակառավարվող համակարգերի ղեկավարման խնդիրներին, հարմարվողականության և կայունության տեսությանը:

Պրոֆեսոր Նաիրա Հովակիմյանի գիտական խումբը մշակել է սկզբունքորեն նոր տեսություն, որի համաձայն գերաբազ թռչող ինքնակառավարվող ինքնաթիռները հնարավորություն են ստանում առավելագույնս արագ աղապտացվել արտակարգ պայմաններին: Օդային նավագնացության նման համակարգերը, որոնց հիմքում դրված են Հովակիմյանի ղեկավարած գիտական խմբի մշակած տեսության սկզբունքները, այժմ հաջողությամբ փորձարկումներ են անցնում ԱՄՆ-ի ռազմական քաղաքներում: Միջազգային ճանաչման արժանացած գիտնականի հիմնադրած գերարագ հարմարվողականության կառավարվող համակարգերի հետազոտման ու մշակման լաբորատորիայի բեղմնավոր գործունեությանը սատարում ու աջակցում են ԱՄՆ-ի ռազմաօդային ուժերն ու «Բոինգ» կորպորացիան: Նաիրա Հովա-



կիմյանը գիտական և գործնական առաջարկներով համագործակցում է նաև ՆԱՄԱ-ի հետ: Վերջերս Ն. Հովակիմյանը ստացել է նոր հրավեր՝ Իլինոյսի համալսարանի մեխանիկայի ամբիոնում անվանական պրոֆեսորի պաշտոնում աշխատելու համար: Ի դեպ, այդ համալսարանը հայտնի է Նոբելյան մրցանակի արժանացած իր ավելի քան երեսուն աշխատակիցներով:

2006 թվականից Նաիրա Հովակիմյանի անունը իր պատվավոր տեղն է զբաղեցնում «Ով ով է ամերիկյան կանանց մեջ», «Ով ով է աշխարհում» և միջազգային ճանաչում ստացած այլ հանրագիտարանային հրատարակություններում:

Հաճելի է նշել, որ գիտական լուրջ մրցանակներ շահած, միջազգային մի քանի արտոնագրերի հեղինակ մեր հայրենակցուհին հոգով ու սրտով նաև մայր հայրենիքի հետ է: Ամեն տարի, որպես կանոն, նա երկու անգամ այցելում է Երևանաբնակ ծնողներին և հայրենիքի, հարազատ-մերձավորների կարոտն առած՝ ետ վերադառնում գիտության անդաստանում հերթական ներդրումը գրանցելու աներեր հավատով:

Երվարդ ՀԱՎԻՄՅԱՆ
ՀՀ վաստակավոր ժառանգիստ

Գիտություն
Ի տեղի գլխավոր խմբագրի՝
Ա. ՏԵՐ-ԳԱՐԻԻԵԼՅԱՆ
Երևան-19, Մարշալ Բաղրամյան 24բ, հեռ. 56-80-14: Դասիչ՝ 69268,
գրանցման վկայական՝ 448:
Ստորագրված է տպագրության՝ 18.12.2008 թ.:
"ГІТУТІОН" ("Hayka") gazeta HAH PA